

MONITORING REPORT OF THE PROCUREMENT COMPLAINT SYSTEM



Սույն հրապարակման պատրաստումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ (դրամաշնորհ G20332): Հրապարակման մեջ տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՋԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Ծրագրի փորձագետ

Արմենուհի Բուրնազյան
Հանրային գնումների փորձագետ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Հայաստան, Երևան 0002,
Սարյան 12 Հեռ.՝ (+374 10) 569589, 569689
Էլ. փոստ՝ info@transparency.am
<https://transparency.am>

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ*	3
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
1. Գնումների բողոքարկման համակարգերին ներկայացվող ընդհանուր պահանջները, տեսակները Եվրոպական Միությունում. Հայաստանում այդ համակարգի Եվրյունցիան	9
2. Հիմնախնդիրը, այն ուսումնասիրելու անհրաժեշտությունը և ուսումնասիրության մեթոդաբանությունը	21
3. Մոնիտորինգի արդյունքները և դրանց վերլուծությունը	24
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	31
Հավելված 1. Պատվիրատուների գործողությունների և որոշումների դեմ ներկայացված բողոքներ, 2022թ. հունիս-դեկտեմբերի 31	35
Հավելված 2. Պատվիրատուների գործողությունների և որոշումների դեմ ներկայացված բողոքներ, 2021թ. հունիս-դեկտեմբերի 31	64
Հավելված 3. Գնումների Սև ցուցակում ներառելու որոշման դեմ ներկայացված բողոքներ, 2022թ. հունիս-դեկտեմբերի 31	78
Հավելված 4. Գնումների Սև ցուցակում ներառելու որոշման դեմ ներկայացված բողոքներ, 2021թ. հունիս-դեկտեմբերի 31	95
Հավելված 5. Պատվիրատուների գործողությունների և որոշումների դեմ ներկայացված բողոքների քննության ժամանակահատվածը, 2022թ. հունիս-դեկտեմբերի 31	111
Հավելված 6. Պատվիրատուների գործողությունների և որոշումների դեմ ներկայացված բողոքների քննության ժամանակահատվածը, 2021թ. հունիս-դեկտեմբերի 31	114
Հավելված 7. Գնումների Սև ցուցակում ներառելու որոշման դեմ ներկայացված բողոքների քննության ժամանակահատվածը, 2022թ. հունիս-դեկտեմբերի 31	115
Հավելված 8. Գնումների Սև ցուցակում ներառելու որոշման դեմ ներկայացված բողոքների քննության ժամանակահատվածը, 2021թ. հունիս-դեկտեմբերի 31	116

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ*

ԹԻՅԿ - «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն

UNCITRAL - ՄԱԿ-ի Միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողով (United Nations Commission on International Trade Law)

ԵՄ - Եվրոպական Միություն

ՏՀԶԿ (անգլերեն՝ OECD) - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organisation for Economic Cooperation and Development)

ՍԻԳՄԱ (անգլերեն՝ SIGMA) - Աջակցություն կառավարման և մենեջմենթի բարելավմանը (Support for Improvement in Governance and Management)

ԳԲԽ - Գնումների բողոքարկման խորհուրդ

ԱԺ - Ազգային ժողով

ԳՀՀ - Գնումների համընդհանուր համաձայնագիր (անգլերեն՝ General Procurement Agreement)

ՀԸԳՀ (անգլերեն՝ CEPA) - Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր

IRI - International Republican Institute (Միջազգային հանրապետական ինստիտուտ)

ՍՊԸ - Սահմանափակ պատասխանատվության ընկերություն

ՓԲԸ - Փակ բաժնետիրական ընկերություն

ԱԶ (Ա/Ձ) - Անհատ ձեռնարկատեր

ՊՈԱԿ - Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՀՈԱԿ - Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

ԲԸ - Բաժնետիրական ընկերություն

ՖՆ - Ֆինանսների նախարարություն

ԱՓԲԸ - Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն

ՊՆ - Պաշտպանության նախարարություն

ԲԲԸ - Բաց բաժնետիրական ընկերություն

ԳԱԱ - Գիտությունների ազգային ակադեմիա

ՏԿԵՆ - Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

**Շանդթագրություն. Ցանկում ներառված չեն Հավելվածներում նշված այն հապավումները, որոնք առկա են մասնակիցների անվանումների մեջ, ինչպես նաև գնման գործընթացների ծածկագրերի հապավումները:*

Ինչպես և այլ երկրներում, Հայաստանում նույնպես հանրային գնումները կարևոր դեր են խաղում երկրի տնտեսության մեջ: Հանրային գնումները 2022թ.-ին կազմեցին պետական և համայնքային բյուջեների ընդհանուր ծախսերի 12.1%-ը: Գնումների բողոքարկման համակարգի հիմնախնդիրները կրել են շարունակական բնույթ՝ սկսած 2000 թվականից, երբ Հայաստանում ուժի մեջ մտավ գնումների մասին առաջին օրենքը: Որպես այդ հիմնախնդիրների լուծման հերթական քայլ 2022թ. հունվարին գնումների վերաբերյալ օրենսդրությունում կատարվեց փոփոխություն, որով վերացվեց գնումների բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչը՝ թողնելով միայն դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը: Այս փոփոխությունը միարժեք արձագանք չգտավ տնտեսվարողների և փորձագետների շրջանում: Ելնելով դրանից՝ «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության իրականացնել գնումների բողոքարկման համակարգի մոնիտորինգ: Այն իրականացվեց 2022թ. մայիսից մինչև 2023թ. սեպտեմբեր ժամանակամիջոցում, որը թույլ տվեց բացահայտել գնումների բողոքարկման նոր համակարգի ուժեղ և թույլ կողմերը և վեր հանված թերությունների դեպքում, առաջարկել լուծումներ դրանք հաղթահարելու համար:

Գնումների բողոքարկման ընթացակարգերը պետք է ապահովեն բողոքների արդար և անկողմնակալ քննություն և դրանց արդյունավետ լուծումներ: Դա ապահովելու համար բողոքարկման համակարգերի որոշակի տարրերը պետք է բավարարեն մի շարք հիմնարար պահանջներին: Մասնավորապես, բողոքների լիազորությունները պետք է վերապահվեն անկախ կառույցին (վարչական մարմին և/կամ դատարան), որը պետք է տիրապետի համապատասխան մասնագիտական գիտելիքների և համալրված լինեն փորձառու և իրենց հմտությունները շարունակաբար անցկացվող վերապատրաստումների միջոցով կատարելագործող գնումների մասնագետներով: Այդ մարմինն կարող է դիմել գնումների գործընթացին մասնակից ցանկացած անձ, որը կարող է բողոքարկել գնման ցանկացած գործընթաց, և բողոքների քննությունը պետք է կատարվի սահմանափակ, ոչ երկար ժամկետներում: ԵՄ երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ երկրներում կիրառվում են բողոքարկման տարբեր մոտեցումներ: Դրանցից են մասնակցի կողմից պատվիրատուին կամ նրա վերադասին բողոքի ներկայացումը, բողոքի ներկայացումը միայն դատական մարմիններին կամ միայն արտադատական մարմիններին, ընդ որում դատական միևնույն տեսակի, հիմնականում քաղաքացիական գործերով, դատարաններին, բողոքի ներկայացումը տարբեր փուլերում (մինչև պայմանագրի կնքումը և պայմանագրի կնքումից հետո) տարբեր տեսակի դատական մարմիններին (մինչև պայմանագրի կնքումը՝ վարչական, իսկ պայմանագրի կնքումից հետո՝ քաղաքացիական գործերով դատարաններին), բողոքի ներկայացումը միայն արտադատական մարմին, ինչպես նաև բողոքի ներկայացումը սկզբում արտադատական մարմին, իսկ այնուհետև դատական մարմին: ԵՄ անդամ երկրների մեծ մասում օրենքը թույլ է տալիս բողոքարկել առաջին դատական ատյանի մարմնի որոշումները երկրորդ ատյանում, որոնք տարբեր երկրներում տարբեր են լինում: Որպես կանոն, բողոքարկման երկրորդ ատյանի որոշումը վերջնական է: Վերջապես, ԵՄ անդամ որոշ երկրներում գնումների հետ կապված վեճերի հարցում որոշակի դեր են խաղում պետական այլ մարմիններ (օրինակ, մարդու իրավունքների պաշտպանը կամ հանրային գնումների քննության խորհուրդը), որոնք վեճերի լուծման մեջ խորհրդատվական դեր են խաղում:

Հանրային գնումները կարգավորող Գնումների մասին առաջին օրենքը Հայաստանում ընդունվեց 2000թ. հունիսին և ուժի մեջ մտավ նույն տարվա օգոստոսին: Այն, ինչպես և գնումների մասին հետագա բոլոր օրենքները, պարունակում էր գնումների բողոքարկմանն առնչվող կարգավորումներ: Ըստ այդ կարգավորումների, յուրաքանչյուր անձ ուներ բողոքարկման իրավունք, եթե պատվիրատուի և (կամ) լիազոր մարմնի գործողությունների հետևանքով կրել է կամ կարող է կրել վնասներ: Բողոքարկել կարելի էր պատվիրատուի որոշումները պատվիրատուին, պատվիրատուի որոշումները՝ լիազոր մարմնին և դատական կարգով բողոքարկել լիազոր մարմնի և/կամ պատվիրատուի որոշումները: Գնումների մասին երկրորդ օրենքն ընդունվեց 2004թ. դեկտեմբերին և ուժի մեջ մտավ 2005թ. հունվարի 1-ից: Այդ օրենքով բողոքարկելու իրավունք ունեին միայն այն անձինք, ովքեր պատվիրատուի և (կամ) մրցույթի հանձնաժողովի գործողությունների հետևանքով կրել էր կամ կարող էր կրել վնասներ, ընդ որում այդ անձինք պետք էր դրա մասին հայտարարեին: Բողոքարկել կարելի էր պատվիրատուի որոշումները լիազոր մարմնին և դատական կարգով բողոքարկել լիազոր մարմնի և/կամ պատվիրատուի որոշումները: Գնումների մասին երրորդ օրենքը, որն ընդունվեց 2010թ. դեկտեմբերին և ուժի մեջ մտավ 2011թ. հունվարի 1-ից, բողոքարկելու իրավունք ունեցող անձանց ավելի լայն շրջանակ էր սահմանում՝ չսահմանափակելով այդ շրջանակը միայն այն անձանցով, ովքեր պատվիրատուի և (կամ) մրցույթի հանձնաժողովի գործողությունների հետևանքով կրել էին կամ կարող էին կրել վնասներ: Ընդ որում, առաջին անգամ սահմանվում էր (ավելի շուտ՝ կոնկրետացվում), որ կարող էին բողոքարկվել ոչ միայն համապատասխան մարմինների գործողություններն, այլև նրանց անգործությունը և որոշումները: Նույնպես առաջին անգամ սահմանվեց, որ այն անձը, ով վնասներ էր կրել պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ուներ դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում, պայմանով, որ ինքը շահագրգռված էր կոնկրետ գործարքի կնքման հարցում: Նաև կոնկրետացվեց, որ գնումների բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ: Թերևս, օրենքի կարևորագույն նորամուծություններից էր այն, որ առաջին անգամ Հայաստանում օրենքով ստեղծվեց բողոքարկման անկախ արտադատական մարմին՝ գնումների բողոքարկման խորհուրդը, որը կազմված էր հասարակական հիմունքներով գործող պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներից, և որին սկզբից կարող էր դիմել բողոք ներկայացնող անձը: Եթե նա չի բավարարվում խորհրդի ընդունած որոշումից, ապա նա կարող է բողոքարկել այդ որոշումը դատական կարգով (ընդ որում, անձը կարող էր միանգամից իր բողոքով դիմել դատարանին): Գնումների մասին այս օրենքում բողոքարկման հետ կապված կարգավորումները մնացին նույնը նաև գնումների մասին ներկա, չորրորդ օրենքի սկզբնական տարբերակում, որն ընդունվեց 2016թ. դեկտեմբերին և ուժի մեջ մտավ 2017թ. ապրիլին: Սակայն օրենքի գործողության մեկ տարին չլրացած՝ 2018թ. մարտին գնումների բողոքարկման համակարգի գործող արտադատական բաղադրիչը՝ գնումների բողոքարկման խորհուրդը, փոխարինվեց մեկ այլ արտադատական կառույցով՝ բողոքներ քննող անձերով: Դրանք մշտական հիմունքներով գործող պետական ծառայողներ էին (թվով 2), ովքեր պետք է պաշտոնավարեին հինգ տարի ժամկետով: Սակայն, այս մոտեցումը ևս վերանայվեց և 2022թ. հունվարին գնումների մասին ներկա օրենքում և նրան առնչվող հարակից օրենքներում իրականացված փոփոխությունների արդյունքում գնման ընթացակարգերի բողոքարկման լիազորությունները վերապահվեցին միայն դատարաններին, ընդ որում միայն ընդհանուր իրավասության քաղաքացիական գործերով

դատարաններին: Այդ փոփոխությամբ վերացվեց գնումների բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչը:

Գնումների բողոքարկման արտադատական բաղադրիչի վերացման մասին նշվում էր դեռևս Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարության և նրա իրականացման 2019-2023թթ. գործողությունների ծրագրում, որն ընդունվեց 2019թ. նոյեմբերին: Որպես այդ քայլի հիմնավորում, գնումների լիազոր մարմինը (ՀՀ ֆինանսների նախարարությունը) նշում էր այդ պահին գործող բողոքներ քննող անձանց ոչ արդյունավետ, շատ անգամ նույնիսկ ոչ արհեստավարժ գործունեությունը: Սակայն, գնումների համակարգի շատ փորձագետներ և պրակտիկներ մատնացույց էին անում այդ քայլի հնարավոր մի շարք բացասական հետևանքները (բողոքարկման համակարգի մատչելիության սահմանափակում, դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակ, դատական գործընթացների դանդաղ ընթացք, և այլն), որոնք, իրենց պնդմամբ, բավարար չափով չէին ուսումնասիրվել: Սույն մոնիտորինգային ծրագիրը նպատակ ունի գնահատելու բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչի վերացման ազդեցությունն այդ համակարգի անկողմնակալության և արդյունավետության վրա: Մոնիտորինգի մեթոդաբանության հիմքում ընկած է գնումների բողոքարկման երկբաղադրիչ (արտադատական և դատական) և միաբաղադրիչ (միայն դատական) համակարգերի համեմատությունը: Համեմատվել են 2021թ. հունիս-դեկտեմբեր ժամանակահատվածը, երբ դեռ գործում էր գնումների բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչը, և 2022թ. հունիս-դեկտեմբեր ժամանակահատվածը, երբ այդ բաղադրիչն այլևս չկար:

Մոնիտորինգի հիմնական արդյունքներն են.

- 2021թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին արտադատական կարգով քննվել են մոտ երկու անգամ ավելի մեծ թվով բողոքներ, քան այն վերացնելուց հետո՝ դատական կարգով 2022թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին: Ընդ որում, բողոքներ քննող անձանց կողմից ընդունված որոշումների միայն շուրջ 6%-ն է այնուհետև բողոքարկվել է դատարանում:
- 2021թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին արտադատական կարգով քննված և կամ բավարարված կամ մերժված բողոքներից լրիվ կամ մասնակի բավարարվել է բոլոր այդպիսի բողոքների մոտ 52.5%-ը: Միևնույն ժամանակ, 2022թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին դատական կարգով քննված և կամ բավարարված կամ մերժված բողոքներից լրիվ կամ մասնակի բավարարվել է բոլոր այդպիսի բողոքների 37.5%-ը:
- 2022թ.-ին դատական բողոքների մեծ մասը (55%) եղել են հայտերի գնահատման փուլում ընդունված որոշումների դեմ: Էլ ավելի մեծ է հայտերի գնահատման փուլում ընդունված որոշումների դեմ բողոքների տեսակարար կշիռը (77.4%), որոնք 2021թ.-ին քննվել են արտադատական կարգով:
- Չնայած 2022թ. դիտարկվող ժամանակահատվածում պատվիրատուների որոշումների դեմ դատական կարգով ներկայացված և քննված բողոքների թիվը ավելի քան երկու անգամ գերազանցում է նախորդ տարվա նմանատիպ ցուցանիշը, սակայն վերաքննիչ բողոքների քանակը էական փոփոխությունների չի ենթարկվել:
- 2022թ. դիտարկվող ժամանակահատվածում պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների մասով դատական կարգով ընդունված վերջնական որոշումների մասնաբաժինը ավելացել է նախորդ տարվա

համեմատ (30%-ից դառնալով 55%), այսինքն այս առումով նկատվել է որոշակի արդյունավետության բարելավում, որը պայմանավորված է նաև օրենսդրական փոփոխությամբ, որով սահմանվեց գնումների բողոքների մասով հատուկ վարույթով որոշումների կայացման ընթացակարգ:

- 2021թ. դիտարկվող ժամանակահատվածում Գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (Սև ցուցակ) ներառելու վերաբերյալ արտադատական կարգով պատվիրատուների օգտին կայացված որոշումների շուրջ 17%-ը (226 բողոքներից 38-ը) բողոքարկվել է դատարանում:
- Չնայած նոր փոփոխությունը զգալիորեն կրճատել է դատական կարգով դրանց քննության և որոշումների ընդունման ժամանակահատվածը, այնուամենայնիվ կան մի շարք դեպքեր, երբ բողոքի վարույթ ընդունելու կամ քննության ժամանակահատվածը բավական երկարաձգվել է, ինչը հանգեցրել է օրենքով սահմանված ժամկետների խախտմանը:

Ելնելով մոնիտորինգի վերը բերված արդյունքների հիման վրա արվել են եզրակացություններ և գնումների բողոքարկման ավելի արդյունավետ, մատչելի և անկողմնակալ համակարգ ապահովելուն ուղղված առաջարկություններ: Հրապարակման հավելվածներում բերված են մոնիտորինգի ենթարկված բոլոր բողոքները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային գնումները կարևոր դեր են խաղում ցանկացած երկրի տնտեսության մեջ: Դա վերաբերում է նաև Հայաստանի տնտեսությանը: Համաձայն [2022թ. գնումների տարեկան հաշվետվության](#), պետական մարմինների կողմից իրականացված գնումների ընդհանուր ծավալը կազմել է մոտավորապես 295,924 մլն. ՀՀ դրամ (տե՛ս Հաշվետվության Աղյուսակ 4.1-ը), որը կազմում է ՀՀ պետական և համայնքային բյուջեների նույն տարվա ամբողջ ծախսերի 12.1%-ը: Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում ընդամենը կնքված գնումների պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է մոտավորապես 390,593 մլն. ՀՀ դրամ (տե՛ս նույն Հաշվետվության Աղյուսակ 4-ը):

Հայաստանի հանրային գնումների շարունակական հիմնախնդիրներից է գնումների բողոքարկման համակարգը: 2022թ. հունվարին հանրային գնումների վերաբերյալ օրենսդրությունում կատարվեցին էական փոփոխություններ, որոնց մեջ ամենաառանցքայիններից մեկը գնումների բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչի վերացումն էր՝ թողնելով միայն դատական բաղադրիչը: Այլ կերպ ասած, այդ փոփոխության արդյունքում գնման գործընթացում ներգրավված մասնակիցները կարող էին բողոքարկել այդ գործընթացի հետ կապված որոշումները և/կամ գործողությունները **միայն** դատական կարգով: Արդեն այդ փոփոխության քննարկման ժամանակ և՛ Ազգային ժողովում, և՛ տարբեր փորձագետների և գնումների գործընթացներում մասնակցող տարբեր տնտեսվարողների կողմից հնչեցվեցին մտահոգություններ, որ այդ փոփոխությունները կարող են հանգեցնել գնումների բողոքարկման համակարգի ավելի վատթարացման:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից 2022թ. մայիսից մինչև 2023թ. սեպտեմբեր իրականացվել է գնումների բողոքարկման համակարգի մոնիտորինգային ծրագիր: Ծրագրի նպատակն էր նպաստել Հայաստանում իրապես անկախ, արդյունավետ և մատչելի գնումների բողոքարկման համակարգի կայացմանը: Այդ նպատակին հասնելու համար խնդիր էր դրված բացահայտել գնումների բողոքարկման նոր համակարգի ուժեղ և թույլ կողմերը և վեր հանված թերությունների դեպքում, առաջարկել լուծումներ դրանք հաղթահարելու համար: Սույն հրապարակման մեջ ամփոփված են ծրագրի արդյունքները, ինչպես նաև ներկայացված են այդ արդյունքների վերլուծության հիման վրա արված եզրակացությունները և մշակված առաջարկությունները:

1. Գնումների բողոքարկման համակարգերին ներկայացվող ընդհանուր պահանջները, տեսակները Եվրոպական Միությունում. Հայաստանում այդ համակարգի Եվոյուցիան

Հանրային գնումների գործընթացների բողոքարկման ընթացակարգերը կոչված են ապահովելու հանրային գնումներում բողոքների լուծման համար արդյունավետ մեխանիզմներ: Բողոքարկման ընթացակարգերի նախագծման և կիրարկման հարցում պետք է հաշվի առնվեն հետևյալ պահանջները:

1. **Բողոքների քննության մեխանիզմներ.** Բողոքների քննության լիազորությունները պետք է տրվեն *անկախ* մարմին կամ մարմիններին (վարչական մարմին(ներ) և/կամ դատարան(ներ)), բողոքների դեպքերը քննելու և դրանք լուծելու, ներառյալ պատժամիջոցներ կիրառելու, համար: Ընդ որում, վնասի հատուցման իրավասությունը պետք է մնա դատարաններին:

2. **Բողոքները քննող մարմնի տեսակը.** Բողոքները քննող անկախ մարմնի ստեղծումը նշանակում է, որ առկա է գիտակցում, որ բողոքների քննումը և դրա արդյունքում արագորեն քայլեր ձեռնարկումը պահանջում են մասնագիտական գիտելիքներ:

3. **Դատական հայց ներկայացնելու իրավասություն.** Գնումների օրենսդրության իմաստով ցանկացած մասնակից պետք է ունենա դատական հայց ներկայացնելու իրավունք:

4. **Գնման ցանկացած գործընթաց բողոքարկելու հնարավորություն.** Այս նկատառումը նշանակում է, որ բողոքարկվել կարող են նաև գնման այն գործընթացները, որոնց գնման գինը չի գերազանցում գնումների՝ տվյալ երկրում սահմանված բազային միավորը (Հայաստանի դեպքում այն հավասար է 1,000,000 ՀՀ դրամի):

5. **Բողոքի քննությունը նախաձեռնելու ժամկետի սահմանափակություն.** Բողոքի քննությունը պետք է նախաձեռնել այնպիսի ժամանակային սահմաններում, որպեսզի նրա լուծումը հնարավոր լինի ունենալ ամենաուշը մինչև պայմանագրի կնքման օրը:

6. **Առնչությունը UNCITRAL-ի Գնումների մասին մոդելային օրենքում սահմանված բողոքարկման ընթացակարգերի հետ.** Այն երկրները, որոնց գնումների վերաբերյալ օրենսդրությունում առկա բողոքարկմանը վերաբերող դրույթներն արդեն հիմնված են UNCITRAL-ի Գնումների մասին մոդելային օրենքի համապատասխան դրույթների վրա, պետք է ուղղակի կատարելագործեն դրանք, և ոչ թե ստեղծեն բողոքների քննության ամբողջովին նոր համակարգ:

Գնումների վերաբերյալ ազգային օրենսդրության և նրա մասը կազմող բողոքարկման ընթացակարգերի առկայությունն ինքնին բավարար չէ բողոքարկման արդյունավետ համակարգ ունենալու համար: Անհրաժեշտ է նաև, որպեսզի երկրներն ունենան արդյունավետ կառավարվող, ունակ, բավարար ծավալի միջոցներ ունեցող գնումներով զբաղվող կառույցներ, ինչպես նաև կանխարգելող, վերահսկող և ներքին աուդիտի գործունե մեխանիզմներ: Ի լրումն դրա, նշված կառույցները պետք է համալրված լինեն փորձառու և իրենց հմտությունները շարունակաբար անցկացվող վերապատրաստումների միջոցով կատարելագործող գնումների մասնագետներ:

Սույն հրապարակման մեջ քննարկվում են Եվրոպական Միության (ԵՄ) երկրներում գործող գնումների բողոքների քննության ինստիտուցիոնալ համակարգերը, այլ խոսքով, ինչպես են նրանք կազմակերպում բողոքների քննությունը, ինչ որոշումներ են ընդունվում բողոքը

ներկայացնող մասնակիցների օգտին և այդպիսի որոշումների արդյունքում ինչպես են փոխհատուցվում տուժողների վնասները:¹ Որպես աղբյուրներ օգտագործվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ, անգլերեն - OECD) և ԵՄ համատեղ նախաձեռնությունն հանդիսացող ՍԻԳՄԱ ծրագրի կողմից պատրաստված երկու քաղաքականության փաստաթղթերը (policy paper)՝ **Հանրային գնումների քննության ընթացակարգերը** (Public Procurement Review Procedures: SIGMA Paper No. 30, OECD, CCNM/SIGMA/PUMA(2000)14) և **Հանրային գնումների քննության ընթացակարգերը և վնասների փոխհատուցումը Եվրոպական Միությունում** (Public Procurement Review Procedures and Remedies Systems in the European Union: SIGMA Paper No. 41, OECD, GOV/SIGMA(2007)5), որոնք հրապարակվել են համապատասխանաբար 2000 և 2007 թվականներին: Երկրորդ, 2007թ. հրապարակումը նախորդ, 2000թ. հրապարակման թարմացումն է և ընդգրկում է ԵՄ ավելի մեծ թվով անդամ-երկրներ (24 երկիր՝ նախկին 11-ի) փոխարեն:²

Պատվիրատուին կամ նրա վերադասին բողոքի ներկայացումը

Նախքան բողոքների քննության համակարգերը դիտարկելը, վերը նշված ուսումնասիրություններում, մանավանդ երկրորդում, անդրադարձ է կատարվում նրան, թե ինչպես է ԵՄ անդամ տարբեր երկրներում կարգավորվում մասնակցի կողմից որպես առաջին քայլ բողոքը պատվիրատուին ներկայացնելը: Հարկ է նշել, որ երկրորդ ուսումնասիրության մեջ ներգրավված ԵՄ անդամ 24 երկրների բողոքների քննության և վնասների փոխհատուցման համակարգերն էլ հնարավորություն են տալիս մասնակցին բողոքն ուղղակի ներկայացնել կամ պատվիրատուին, կամ էլ նրա վերադասին:³

Սակայն, ԵՄ անդամ տարբեր երկրներում այդ գործիքի կառավարումը տարբեր է: Որոշ երկրներում, օրինակ, **Գերմանիայում** և **Կիպրոսում**, պատվիրատուին դիմելն ինքնին բողոքարկման գործընթացի առաջին պարտադիր քայլն է: Մյուս կողմից, **Պորտուգալիայում** դա պարտադիր չէ, բայց, չնայած դրան, այնտեղ հանրային գնումներին առնչվող վեճերն առավել հաճախ լուծվում են հենց այդ փուլում, չհասնելով հաջորդ փուլերին: **Լատվիայում**՝ որպես բողոքարկման առաջին քայլ պատվիրատուին դիմելը հանդիսանում է նախաքննության նախապայման միայն այն դեպքերում, երբ առկա են ոչ պատշաճ պայմանագրային փաստաթղթեր: **Իռլանդիայում** բողոքների և դատական վերանայման վրա ծախսված ժամանակը նվազեցվում է պրակտիկայում կիրառվող ամփոփ *ճեպագրույցների* անցկացման միջոցով: Մրցույթներում հաջողության չհասած մասնակիցների համար պատվիրատուների կողմից անցկացվող այդ ճեպագրույցների ժամանակ

¹ Ելնելով տվյալ մոնիտորինգային ուսումնասիրության առարկայից՝ սույն հրապարակման մեջ դիտարկվում են միայն գնումների բողոքների քննության համակարգերը:

² Երկրորդ ուսումնասիրությունն իրականացվել է 2006թ. մարտ-օգոստոս ամիսներին և ՍԻԳՄԱ-ի փորձագետները պլանավորում էին նրանում ներառել այդ պահի դրությամբ ԵՄ անդամ բոլոր 25 երկրներին, ինչպես նաև Ռումինիային և Բուլղարիային, որոնք, չնայած, այդ ժամանակ դեռևս չէին անդամակցել ԵՄ-ին, բայց արդեն սահմանված էր նրանց անդամակցման ժամկետը՝ 2007թ. հունվարի 1-ը: Ուսումնասիրության հիմքում ընկած էր ՍԻԳՄԱ-ի փորձագետների կողմից կազմված հարցաշարը, որն ուղարկվեց հետազոտության մեջ ներառված բոլոր 27 երկրների համապատասխան պետական մարմիններին: Զանի որ այդ երկրներից երեքի (Իսպանիա, Իտալիա և Հունաստան) այդ մարմինների սահմանված վերջնաժամկատին ՍԻԳՄԱ-ին չվերադարձրին իրենց կողմից լրացված հարցաշարերը, այդ երկրները դուրս մնացին ծրագրից և այն իրականացվեց 24 երկրներում:

³ Այստեղ պետք է տարբերակել մասնակցի կողմից որպես առաջին քայլ պատվիրատուին, որի կողմից կազմակերպված գնման ընթացակարգին նա մասնակցել է, վեճը լուծելու նպատակով դիմելը և նրան բողոքարկելու մասին նրան ուղղակի տեղյակ պահելը (որը ԵՄ անդամ երկրներում պարտադիր է):

պատվիրատուները մասնակիցներին բացատրում են և նրանց հետ քննարկում են նրանց հայտերի ուժեղ և թույլ կողմերը: Այս ճեպագրույցները պարտադիր չեն, բայց դրանց անցկացումը քաջալերվում է՝ խթանելու համար կառուցողական երկխոսություն պատվիրատուների և մասնակիցների միջև:

Պատվիրատուին բողոք ներկայացնելն ունի ակնհայտ առավելություններ, մանավանդ այն դեպքերում, երբ բողոքի ներկայացման պատճառը ոչ թե գնումների օրենսդրության միտումնավոր խախտումն է, այլ փաստաթղթերում ամկա իրական և ակնհայտ սխալ(ներ)ը, կամ էլ, երբ վեճը հետևանք է օրենքի տարբեր մեկնաբանությունների: Դա է պատճառը, որ ԵՄ անդամ որոշ երկրներում, ինչպիսիք են, օրինակ, **Յունգարիան** կամ **Ֆինլանդիան** մասնակիցները, նախքան բողոքարկման համար դատական կամ վարչական մարմին դիմելը, պարտադիր կարգով պետք է իրենց բողոքի պատճենն ուղարկեն պատվիրատուին: Սրանով մասնակիցը նաև կարող է խուսափել պատվիրատուի հետ առճակատման գնալուց: Պատվիրատուին ուղղակի դիմելը հաճախ կարող է լինել վեճի լուծման ամենաարագ և քիչ ծախսատար ճանապարհը:

2007թ.-ի ուսումնասիրության մեջ ընդգրկված ԵՄ 24 անդամ երկրների գնումների բողոքարկման համակարգերը կարելի է դասակարգել ըստ երկու հայտանիշների: Առաջին հայտանիշը դա այն է, թե քանի տեսակի դատարաններ են տվյալ երկրում ներգրավված գնումների բողոքների քննության մեջ, իսկ երկրորդ հայտանիշը՝ բողոքարկման համակարգում արտադատական բաղադրիչի առկայությունը կամ բացակայությունը:

Բողոքարկման դուռը (կրկնակի) և սինգուլյար (եզակի) համակարգեր

Շատ հաճախ (բայց ոչ միշտ) ԵՄ անդամ այն բոլոր երկրներում, որտեղ վարչական իրավունքը հստակորեն առանձնացված է քաղաքացիական իրավունքից գործում է գնումների բողոքարկման քննության դուռը համակարգը: Այդպիսի երկրներում վնասների փոխհատուցման պահանջ կարող է ներկայացվել միայն ընդհանուր իրավասության կամ քաղաքացիական գործերով դատարաններում: Ավելին, այդ պահանջը կարող է ներկայացվել այդ դատարաններին միայն պայմանագրի ստորագրումից հետո: Այսպիսով, պայմանագրի կնքումը հաճախ դառնում է գնումների գործընթացի առանձնահատուկ գործողություն, որը դառնում է քննության մարմինների իրավասությունների միջև տարանջատման կետը: Եթե խոսքը գնում է բողոքը ներկայացնողի օգտին վնասների փոխհատուցում չենթադրող որոշումների մասին, մասնավորապես, գնումների վերաբերյալ որոշումների կասեցման կամ չեղյալ հայտարարելու մասին, որոշումներին, ապա դրանք քննվում են քննության այլ մարմինների դատարանների կողմից: Օրինակ, **Շվեդիայում** դրանք վարչական դատարաններն են: Որոշ այլ երկրներում, օրինակ, **Ավստրիայում**, **Կիպրոսում** և **Չեխիայում** նախքան պայմանագրի կնքումը բողոքը քննվում է մասնագիտացված արտադատական քննության մարմնի կողմից, որի որոշումները կարող են բողոքարկվել բարձրագույն վարչական դատարանում: **Ֆրանսիայում** և **Լյուքսեմբուրգում** հանրային (վարչական) իրավունքի հստակ տարանջատումը քաղաքացիական իրավունքից առանձնապես կարևոր է: Ֆրանսիայում պատվիրատուների և որպես այդպիսիք հանդես եկող հանրային սեփականություն հանդիսացող կոմունալ ծառայություններ (Էլեկտրականություն, ջուր, գազ և այլն) մատուցող ընկերությունների դեմ ներկայացված բողոքները քննվում են վարչական դատարաններում, իսկ Լյուքսեմբուրգում վարչական դատարաններում քննում են միայն պատվիրատուների դեմ ներկայացված բողոքները: Ֆրանսիայում մասնավոր սեփականություն հանդիսացող կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների

դեմ ներկայացված բողոքները քննվում են քաղաքացիական գործերով դատարաններում, այն դեպքում, երբ Լյուքսեմբուրգում քաղաքացիական գործերով դատարանները քննում են բողոքները ներկայացված կոմունալ ծառայություններ մատուցող բոլոր ընկերությունների դեմ անկախ սեփականության տեսակից:

Են անդամ որոշ այլ երկրներում գործում է գնումների բողոքարկման քննության սինգուլյար համակարգը: Այդ երկրներից են **Բուլղարիան, Իռլանդիան, Լատվիան և Միացյալ Թագավորությունը**: Չատուկ դեպք է **Դանիան**, որտեղ բողոքը կարող է քննել և՛ առաջին ատյանի դատարանը, և՛ հանրային գնումների բողոքների քննության մասնագիտացված (արտադատական) մարմինը: Երկու համակարգերում էլ առկա է և՛ բողոքները առաջինը քննող մարմինների տեսակների, և՛ բողոքները քննող ատյանների թվի բազմազանություն: Բողոքները առաջինը (առաջին ատյանում) քննող մարմինները կարելի է խմբավորել երկու մեծ խմբի՝ *դատական և մասնագիտացված արտադատական* մարմինների: Ընդ որում, եթե դրանք դատական մարմիններն են, ապա որոշ երկրներում դրանք *ընդհանուր իրավասության* կամ *քաղաքացիական գործերով դատարաններն* են, իսկ մյուսներում՝ *վարչական դատարանները*: **Ադյուսակ Ա**-ում բերված են 2007թ. դրությամբ ԵՄ անդամ երկրներում գործող գնումների բողոքարկման քննության համակարգերը:

Ադյուսակ Ա. Գնումների բողոքների քննության համակարգերը ԵՄ անդամ երկրներում

Համակարգ/Քննող մարմին	Դատարաններ	Քննության արտադատական մասնագիտացված մարմին
Սինգուլյար համակարգ	Իռլանդիա, Լիտվա, Նիդերլանդներ, Պորտուգալիա, Բրիտանիա, Մեծ	Բուլղարիա, Լատվիա, Մալթա, Սլովակիա
Դուալ համակարգ	Բելգիա, Ֆրանսիա, Շվեդիա	Ավստրիա, Կիպրոս, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Հունգարիա, Լյուքսեմբուրգ, Լեհաստան, Ռումինիա, Սլովենիա

Ընդհանուր իրավասության դատարաններ և քննության արտադատական մասնագիտացված մարմիններ

Ինչպես երևում է *Ադյուսակ Ա-ից*, 2007թ. դրությամբ ԵՄ անդամ պետությունների մեծ մասում գործում էին գնումների հետ կապված բողոքների քննության հատուկ մասնագիտացված խորհուրդներ (արտադատական մարմիններ): **Ավստրիայում, Բուլղարիայում և Գերմանիայում** այդ խորհուրդները, որպես կանոն, բաղկացած են որակավորված իրավաբանի նախագահությամբ գնումների գծով փորձագետների խմբից: Տվյալ երկրի այդպիսի մարմինների անդամները հիմնականում պետք է ունենան իրավաբանական կրթություն, ունենան այդ երկրի քաղաքացիություն, տիրապետեն նրա պաշտոնական լեզվին և չունենան դատվածություն: Բացի այդ, նրանք չպետք է կատարեն այլ վճարովի

աշխատանք, բացի բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդելուց, և չպետք է զբաղվեն ձեռնարկատիրական գործունեությամբ: Այդ մարմիններում, բացի իրավաբանական կրթությունից, կարող են աշխատել նաև այլ կրթություն ունեցող գնումների փորձագետներ՝ տնտեսագիտական, շինարարական կամ ճարտարագիտական կրթությամբ:

Սույն ուսումնասիրությունը վեր հանեց, որ գնումների բողոքների քննության մասնագիտացված մարմինների կողմից ընդունված որոշումները **պարտադիր են**: Դրանք իրենց հերթին կարող են, որոշ բացառություններով, բողոքարկվել քաղաքացիական կամ վարչական դատարաններում: Ուսումնասիրության ժամանակ էիս անդամ որոշ երկրներում, օրինակ, **Մալթայում, Լեհաստանում և Սլովակիայում** հանրային գնումների բողոքների քննության մասնագիտացված մարմինները հանդիսանում են հանրային գնումների ավելի մեծ գրասենյակների անկախ մասը: Այդ գրասենյակները զբաղվում են հանրային գնումների հետ կապված նաև այլ հարցերով, ինչպիսիք են գնումների հետ կապված իրավական ակտերի մշակումով, գնումների ընթացակարգերի վերաբերյալ հայտարարությունների և հրավերների հրապարակմամբ կամ գնումների քաղաքականության մշակումով: Այդ գրասենյակների կառուցվածքում գործող գնումների բողոքների քննության մասնագիտացված մարմինների որոշումները կարող են բողոքարկվել՝ դիմելով գրասենյակների ղեկավարներին: Այս ընթացակարգը հանդիսանում է բողոքների քննության գործընթացի առանձին փուլ:

Գնումների բողոքների քննության մասնագիտացված խորհուրդներին դիմելու և այդ արտադատական մարմինների կողմից բողոքները քննելու, դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու կանոնակարգումը սովորաբար իրականացվում է գնումների մասին օրենսդրության միջոցով: Գնումների բողոքների քննության մասնագիտացված արտադատական մարմինների առավելությունը նրանումն է, որ հանրային գնումների վերաբերյալ գիտելիքները և փորձը կենտրոնացված են այդպիսի մարմիններում և բողոքների հետ կապված իրավական, տեխնոլոգիական, տնտեսական և պրակտիկ հարցերի հետ առնչվում են համապատասխան ոլորտների մասնագետները:

ԵՄ անդամ մի շարք երկրներում ուսումնասիրության անցկացման ժամանակ բողոքների քննության արտադատական մարմիններ չկային, և այդ հարցերով զբաղվում էին վարչական կամ քաղաքացիական գործերով ամենացածր ատյանի դատարանները: Մասնավորապես, **Պորտուգալիայում** հանրային գնումների հետ կապված բողոքները քննում են վարչական դատարանները, **Իռլանդիայում, Լիտվայում, Նիդերլանդներում, Շվեդիայում և Մեծ Բրիտանիայում** դա անում են ընդհանուր իրավասության դատարանները, իսկ **Ֆրանսիայում և Լյուքսեմբուրգում**՝ և՛ վարչական, և՛ քաղաքացիական գործերով դատարանները: **Ֆինլանդիայում** այսպես կոչված *Շուկայի դատարանը* (Market Court) մասնագիտացած է գնումների հետ կապված հարցերում, սակայն զբաղվում է նաև տնտեսական իրավունքի այլ ոլորտների հետ կապված հարցերով նույնպես:

Հանրային գնումների հետ կապված բողոքների քննության արտադատական մեխանիզմներ ունեցող Եիս անդամ երկրների մեծ մասում վարչական և քաղաքացիական գործերով դատարանները նույնպես ունեն կարևոր դեր, քանի որ այդ արտադատական մարմինների կողմից ընդունված որոշումները ենթակա են բողոքարկման դատական կարգով: **Սլովակիայում** այդ բողոքարկումը ներկայացվում է ընդհանուր իրավասության երկու ատյանների դատարաններին, **Գերմանիայում և Դանիայում**՝ իրենց երկրների բարձրագույն

դատարաններին, **Հունգարիայում** և **Լեհաստանում**՝ ստորին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին: **Ադյուսակ Բ**-ում ներկայացված են թե ԵԽ անդամ որ երկրներում որ մարմինն է հանդիսանում բողոքների քննության առաջին ատյանը կամ մարմինը, ընդ որում այդ երկրները դասակարգված են նաև ըստ նրա, թե այդ քննությունը որ մարմինն է կատարում պայմանագրի կնքումից առաջ և որը կնքումից հետո:

Ադյուսակ Բ. Բողոքների քննությունն առաջին ատյանում պայմանագրի ստորագրումից առաջ և հետո

	Բողոքների քննության մասնագիտացված արտադատական մարմին	Ընդհանուր իրավասության կամ քաղաքացիական դատարան	Վարչական դատարան
Մինչև պայմանագրի կնքումը	Ավստրիա, Բուլղարիա, Կիպրոս, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Հունգարիա, Լատվիա, Մալթա, Լեհաստան, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա	Բելգիա (կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններ), Դանիա, Ֆրանսիա (կոմունալ ծառայություններ մատուցող մասնավոր ընկերություններ), Իռլանդիա, Լյուքսեմբուրգ (կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններ), Նիդերլանդներ, Մեծ Բրիտանիա	Բելգիա (հանրային մարմիններ), Էստոնիա, Ֆրանսիա (հանրային մարմիններ), Լյուքսեմբուրգ (հանրային մարմիններ), Պորտուգալիա, Ռումինիա

Պայմանագրի կնքումից հետո	Դանիա	Բելգիա (կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններ), Կիպրոս, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա (կոմունալ ծառայություններ մատուցող մասնավոր ընկերություններ), Գերմանիա, Հունգարիա, Իռլանդիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ (կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններ), Մալթա, Նիդերլանդներ, Լեհաստան, Սլովակիա, Սլովենիա, Շվեդիա, Մեծ Բրիտանիա	Բելգիա (հանրային մարմիններ), Ֆրանսիա (հանրային մարմիններ), Լյուքսեմբուրգ (հանրային մարմիններ), Պորտուգալիա, Ռումինիա
---------------------------------	--------------	--	--

Բողոքարկումներ ավելի բարձր ատյաններում

Են անդամ երկրների մեծ մասում օրենքը թույլ է տալիս բողոքարկել առաջին (դատական) ատյանի մարմնի որոշումները: Այլ կերպ ասած, թույլ է տրվում բողոքի քննություն *երկրորդ ատյանում*, որի արդյունքում կարող է բեկանվել կամ փոփոխվել առաջին ատյանի մարմնի որոշումը: Միայն **Բելգիայում**, **Մալթայում** և **Սլովենիայում** չի թույլատրվում բողոքարկել մինչև պայմանագրի կնքումը առաջին ատյանի մարմնի կողմից ընդունված որոշումը: Երկրորդ ատյանները երկրից երկիր տարբերվում են՝ կախված նրանից անդամ երկրում գործում է բողոքարկման դուալ թե սինգուլյար համակարգը: Մեծ թվով անդամ երկրներում, որտեղ մասնակիցը կրում է վնասներ պայմանագրի ստորագրումից հետո, նա վնասների փոխհատուցման հայցով դիմում է քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան, եթե դժգոհ է մնում առաջին ատյանի մարմնի որոշումից:

Քաղաքացիական վերաքննիչ դատարանները հանդիսանում են երկրորդ ատյանի դատարաններ նաև բողոքարկման սինգուլյար համակարգ ունեցող անդամ երկրներում: **Կիպրոսում**, **Իռլանդիայում** և **Դանիայում** երկրորդ ատյանի մարմին են հանդիսանում այդ երկրների *գերագույն դատարանները*, **Ավստրիայում**, **Բուլղարիայում**, **Չեխիայում**, **Ֆինլանդիայում** և **Պորտուգալիայում** դրանք *բարձրագույն վարչական դատարաններն* են (**Ավստրիայում** նաև *Սահմանադրական դատարանը*), իսկ **Ֆրանսիայում** և **Շվեդիայում**

վերաքննիչ վարչական դատարանները՝ նախքան երրորդ ատյանի բարձրագույն վարչական դատարան դիմելը:

Գնումների բողոքարկման քննության արտադատական մարմիններ ունեցող երկրներում այդ մարմինները սովորաբար գործում են որպես բողոքարկման առաջին ատյանի մարմին, իսկ որպես նրանց որոշումները քննող երկրորդ ատյանի մարմին հանդես են գալիս դատարանները: Բացառություն են կազմում **Չեխիան** և **Լեհաստանը**, որտեղ որպես բողոքների քննության երկրորդ ատյան հանդես են գալիս համապատասխանաբար Մրցակցության պաշտպանության գրասենյակի և Հանրային գնումների գրասենյակի տնօրենները, որոնք քննում են իրենց կառույցի մաս հանդիսացող բողոքարկման որոշումների դեմ բերված բողոքները:

Երկրորդ ատյանի հարցում հետաքրքիր մոտեցում է գործում **Գերմանիայում** և **Ռումինիայում**, որտեղ որպես բողոքների քննության առաջին ատյան հանդես են գալիս հանրային գնումների քննության մասնագիտացված մարմինները: Սակայն երկրորդ ատյանի հարցում առաջին ատյանի արտադատական մարմնի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնողն ունի ընտրություն: Նա կարող է դիմել ընդհանուր իրավասության դատարան կամ Վերաքննիչ դատարանի Գնումների հատուկ խորհուրդ (**Ռումինիայում**), որի անալոգը **Գերմանիայում** Պետության բարձրագույն դատարանի Գնումների հատուկ սենատն է:

Վերջին ատյանի քննության մարմիններ

Են անդամ համարյա բոլոր երկրներում, որտեղ անցկացվել էր 2007թ.-ի ուսումնասիրությունը, առկա էր ընդհանուր մոտեցում բողոքարկման վերջին ատյանի մարմինների հարցում: Դա այն է, որ այդ վերջին ատյանը պետք է լինի դատարանը՝ ընդհանուր իրավասության կամ վարչական: Միակ բացառությունները **Մալթան** և **Սլովենիան** են, որտեղ բողոքների քննության մասնագիտացված (արտադատական) մարմինը հանդիսանում է բողոքարկման վերջին ատյանն այն բողոքների դեպքում, որոնք ներկայացվում են նախքան պայմանագրի կնքումը: Սակայն, այս երկրներում էլ պայմանագրի կնքումից հետո ներկայացված բողոքները քննվում են ընդհանուր իրավասության դատարաններում: **Ադուսակ Գ**-ում ներկայացված են նախքան պայմանագրի կնքումը ներկայացված բողոքների քննության ատյանների թիվն ըստ անդամ երկրների:

Ադուսակ Գ. Նախքան պայմանագրի կնքումը ներկայացված բողոքների քննության ատյանները

Ատյան	Բողոքի քննության արտադատական մարմին	Վարչական դատարան	Ընդհանուր իրավասության դատարան
1-ատյան	Ավստրիա, Բուլղարիա, Կիպրոս, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Հունգարիա, Լատվիա, Մալթա, Լեհաստան,	Բելգիա, Էստոնիա, Ֆրանսիա (հանրային մարմիններ), Լյուքսեմբուրգ (հանրային մարմիններ), Շվեդիա	Դանիա, Ֆրանսիա (կոմունալ ծառայություններ մատուցող մասնավոր ընկերություններ), Իռլանդիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ (կոմունալ ծառայություններ)

	Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա		մատուցող ընկերություններ), Նիդերլանդներ, Մեծ Բրիտանիա
2-առյան		Ավստրիա, Բուլղարիա, Չեխիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա (հանրային մարմիններ), Լատվիա, Լյուքսեմբուրգ (հանրային մարմիններ), Պորտուգալիա, Շվեդիա	Կիպրոս, Դանիա, Ֆրանսիա (կոմունալ ծառայություններ մատուցող մասնավոր ընկերություններ), Գերմանիա, Զուլագարիա, Իռլանդիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ (կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններ), Նիդերլանդներ, Լեհաստան, Ռումինիա, Սլովակիա, Մեծ Բրիտանիա
3-առյան		Լատվիա, Պորտուգալիա, Շվեդիա	Էստոնիա, Ֆրանսիա (կոմունալ ծառայություններ մատուցող մասնավոր ընկերություններ), Զուլագարիա, Լիտվա, Նիդերլանդներ, Սլովակիա, Մեծ Բրիտանիա

Վեճերի լուծման խորհրդատվական մարմիններ

Եւս անդամ որոշ երկրներում, օրինակ, **Նիդերլանդներում**, գնումների հետ կապված վեճերի լուծման հարցում որոշակի դեր կարող է խաղալ Մարդու իրավունքների պաշտպանը: Այդ անկախ կառույցը, որին հասանելի են պետական բոլոր կառույցները, կարող են լուծել պատվիրատուների և մասնակիցների միջև վեճերը՝ այդպիսով խուսափելով դատարաններին դիմելու դեպքում ծախսատար և ժամանակատար գործընթացներից:

Գերմանիայում մասնակիցներին թույլատրվում է վիճարկել գնման հետ կապված որոշումները *Հանրային գնումների քննության խորհրդի առաջ*: Այդպիսի խորհուրդներ կարող են ստեղծվել և՛ լանդերի (մարզերի) և դաշնային մակարդակում: Նրանք ունեն լիազորություն, իրենց ուղղված դիմումի հիման վրա կամ ի պաշտոնե, պատվիրատուներից պահանջելու կասեցնել անօրինական որոշումը կամ կատարել օրենքից բխող քայլեր: Սակայն, այդ խորհուրդներն իրավունք չունեն կասեցնել գնումների ընթացակարգը: Միևնույն ժամանակ, այդ խորհրդի կողմից քննության անցկացումը չի հանդիսանում նախապայման՝ քննություն անցկացնելու նպատակով դիմելու Հանրային գնումների պալատներին: Նմանապես, *Դանիայի մրցակցության լիազոր մարմինը* և *Լյուքսեմբուրգի մրցութային հանձնաժողովը* հանդիսանում են խորհրդատվական մարմիններ, և նրանց որոշումները ոչ պարտադիր են, ոչ

Էլ կարող են վիճարկվել դատական կարգով: Ընդհանրապես, միջնորդական փուլում վեճերը լուծելու հնարավորությունները կարող են թույլ տալ դրանք օգտագործել որպես դատական դատաքննության այլընտրանք՝ լինելով ավելի քիչ առճակատվող, ավելի կառուցողական, և, նույնիսկ ավելի քիչ ծախսատար և ժամանակատար տարբերակ:

Հայաստանում գնումների բողոքարկման համակարգերի Էվոլյուցիան

Գնումների մասին ՀՀ առաջին օրենքն ընդունվել է 2000թ. հունիսի 5-ին (ուժի մեջ է մտել նույն թվականի օգոստոսի 21-ին): Արդեն այդ օրենքում բավականին հանգամանալից կերպով կարգավորվում էր գնումների բողոքարկումը (տե՛ս Գլուխ 6 – հոդվածներ 45-50): Համաձայն օրենքի Հոդված 45-ի առաջին մասի, «Յուրաքանչյուր անձ ունի բողոքարկման իրավունք, եթե պատվիրատուի և (կամ) լիազոր մարմնի գործողությունների հետևանքով կրել է կամ կարող է կրել վնասներ:» Ընդ որում, բողոքարկման առարկա չի կարող լինել «1) պատվիրատուի գնումներ կատարելու ձևի և ընթացակարգի ընտրությունը, և 2) պատվիրատուի համար պարտադիր պահանջների կիրառումը»: Օրենքի նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն, բողոքարկել կարելի է պատվիրատուի որոշումները պատվիրատուին (տե՛ս Հոդված 46), պատվիրատուի որոշումները՝ լիազոր մարմնին (տե՛ս Հոդված 47) և դատական կարգով բողոքարկել լիազոր մարմնի և/կամ պատվիրատուի որոշումները (տե՛ս Հոդված 50): Նշված հոդվածների դրույթների շարադրանքից երևում է, որ անձը իրավունք ունի պատվիրատուի դեմ լիազոր մարմնին կամ դատական կարգով բողոք ներկայացնել միայն պատվիրատուին՝ նրա որոշման դեմ բողոք ներկայացնելուց հետո, եթե պատվիրատուն բողոքը չի քննարկել, քննարկել և ընդունել է որոշում, որը բողոք ներկայացնողին չի բավարարել, կամ էլ պատվիրատուն իր որոշումն ընդունել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ:

2004թ. դեկտեմբերի 6-ին ընդունվեց Գնումների մասին նոր, երկրորդ օրենքը, որն ուժի մեջ մտավ 2005թ. հունվարի 1-ին: Նույն օրը Գնումների մասին առաջին օրենքն իր ուժը կորցրեց: Նոր օրենքում նույնպես բողոքարկման կարգավորումներին զգալի տեղ էր հատկացված (տե՛ս Բաժին 7 - հոդվածներ 52-56): Ինչպես և գնումների մասին նախորդ օրենքում, այստեղ ևս ոչ բոլոր անձինք ունեն բողոքարկման իրավունք: Բողոքարկելու իրավունք ունեն միայն այն անձինք, ովքեր «պատվիրատուի և (կամ) մրցույթի հանձնաժողովի գործողությունների հետևանքով կրել է կամ կարող է կրել վնասներ»⁴, ընդ որում այդ անձինք պետք է դրա մասին հայտարարեն (տե՛ս Օրենքի Հոդված 52-ի մաս 1): Այստեղ հետաքրքիր է նշել, որ, ի տարբերություն գնումների մասին նախորդ, 2000թ. օրենքի, այս օրենքում չի նշվում, որ անձն իրավունք ունի նաև բողոքարկելու լիազոր մարմնի գործողությունները, չնայած նրան, որ անձն իրավունք ունի պատվիրատուի և/կամ մրցութային հանձնաժողովի գործողությունները բողոքարկել ոչ միայն դատական կարգով (սահմանվում է Օրենքի Հոդված 56-ով), այլև լիազոր մարմնին (տե՛ս նույն Հոդվածի մաս 2-ը՝ կարգավորվում է

⁴ Գնումների մասին այս օրենքում մրցութային հանձնաժողովին, որի գործողությունները նույնպես կարող են բողոքարկվել, պատվիրատուից առանձին նշելը (ի տարբերություն նախորդ օրենքի) հավանաբար պայմանավորված է նրանով, որ այս օրենքում, ինչպես նաև նրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերում, մասնավորապես, ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 5-ի թիվ 853-Ն որոշման մեջ, առկա են այնպիսի դրույթներ, որոնց կիրարկման արդյունքում մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկված են նաև պատվիրատուն չներկայացնող մարմնի (մարմինների) ներկայացուցիչներ: Մասնավորապես, օրենքի Հոդված 32-ի երկրորդ մասի համաձայն, հանձնաժողովի «Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ»: Նույն օրենքի Հոդված 57-ի առաջին մասի համաձայն, «Պետական գնումների գործակալության ներկայացուցիչները նշանակվում են հանձնաժողովների քարտուղարներ և կարող են լինել միայն բաց պարբերական մրցույթի հանձնաժողովի անդամներ:»

Հոդված 53-ով): Սակայն միևնույն ժամանակ նշված հոդվածի երկրորդ մասում նաև նշվում է, որ դատական կարգով կարելի է բողոքարկել նաև լիազոր մարմնի գործողությունները:

Գնումների մասին երրորդ օրենքը, որը փոխարինեց Նախորդ օրենքին, ընդունվեց 2010թ. դեկտեմբերի 22-ին և ուժի մեջ մտավ 2011թ. հունվարի 1-ին: Ինչպես և Նախորդ օրենքների դեպքում, այստեղ ևս բավականին տեղ էր հատկացված բողոքարկման կարգավորումներին: Այն ներառված է Օրենքի Բաժին 6-ում (տե՛ս Հոդվածներ 45-49): Ի տարբերություն Նախորդ օրենքների, այս դեպքում բողոքարկելու իրավունք ունեցողների շրջանակը սահմանվում է ավելի լայն ձևով՝ այն է, բողոքարկելու իրավունք ունի յուրաքանչյուր անձ՝ առանց սահմանափակելու բողոքարկողների շրջանակն այն անձանցով, ովքեր պատվիրատուի և (կամ) մրցույթի հանձնաժողովի գործողությունների հետևանքով կրել է կամ կարող է կրել վնասներ:⁵ Ընդ որում, առաջին անգամ սահմանվում է (ավելի շուտ՝ կոնկրետացվում), որ կարող են բողոքարկվել ոչ միայն համապատասխան մարմինների գործողություններն, այլև նրանց անգործությունը և որոշումները (տե՛ս Օրենքի Հոդված 45-ի մաս 1-ը): Այս օրենքում նաև առաջին անգամ սահմանվել է, որ այն անձը, ով վնասներ է կրել պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում, պայմանով, որ ինքը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում (տե՛ս Օրենքի Հոդված 45-ի մաս 4-ը): Առաջին անգամ կոնկրետացվում է, որ գնումների բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ (տե՛ս Օրենքի Հոդված 45-ի մաս 2-ը): Ինչ վերաբերում է նրան, թե ում պետք է ներկայացվի բողոքը, ապա այստեղ նույնպես կատարվեց կոնցեպտուալ փոփոխություն (տե՛ս Օրենքի Հոդված 45-ի մաս 3-ը):⁶ Անձը դատական կարգով բողոքարկելուց բացի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները կարող է բողոքարկել նաև գնումների բողոքարկման խորհրդին (ԳԲԽ), որը բողոքներ քննող արտադատական անկախ մարմին է (մինչ այդ մինչդատական բողոքարկման համար պետք էր դիմել կամ պատվիրատուին (Գնումների մասին 2000թ. օրենքի համաձայն) կամ էլ լիազոր մարմնին՝ համաձայն Գնումների մասին 2004թ. օրենքի)⁷ կազմված պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներից: Այսպիսով, գնումների օրենսդրությամբ առաջին անգամ Հայաստանում օրենքով ստեղծվեց բողոքարկման անկախ արտադատական մարմին:⁸ ԳԲԽ անդամներին ներկայացվող պահանջները, ԳԲԽ գործունեության սկզբունքները, նրա կազմը, անդամների պաշտոնավարման ժամկետները, ինչպես նաև նրանց լիազորությունների դադարեցման հիմքերը սահմանվում էին Հոդված 46-ով: Հոդված 47-ը կարգավորում էր ԳԲԽ-ի գործունեությունը, իսկ Հոդված 48-ը՝ ԳԲԽ բողոքարկելու կարգը:

⁵ Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ սույն օրենքի գործողության ողջ ժամկետի ընթացքում (2011թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. ապրիլի 25) ԹՀՀ-ի կողմից իրականացված ՀՀ հանրային գնումների մոնիտորինգային ծրագրերի իրականացման ժամանակ չի արձանագրվել գոնե մեկ դեպք, երբ բողոքը ներկայացվել է գնման տվյալ գործընթացի հետ առնչություն չունեցող որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպության կամ լրատվամիջոցի կողմից:

⁶ Գնումների բողոքարկումների հետ կապված հարաբերությունների քաղաքացիաիրավական լինելը անուղղակիորեն ընդունվում էր նաև գնումների մասին Նախորդ օրենքներում, որոնցում ինչպես և այս օրենքում, սահմանվում է, որ ի թիվս այլ իրավական ակտերից (Սահմանադրություն, օրենքներ, օրենքներ և այլն) գնումների մասին ՀՀ օրենսդրության մաս է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը: Ընդ որում, բոլոր երեք օրենքներում էլ (ինչպես նաև ներկա օրենքում) այդ դրույթը սահմանված է միևնույն Հոդված 4-ում:

⁷ Հարկ է նշել, որ պրակտիկայում, ինչպես ցույց էին տալիս ԹՀՀ-ի կողմից վերը նշված մոնիտորինգային ուսումնասիրության արդյունքները, ԳԲԽ-ն անկախ չէր և մեծ կախվածության մեջ էր գտնվում լիազոր մարմնից, այն է, ֆինանսների նախարարությունից:

2017թ. ապրիլի 25-ին Գնումների մասին վերը նշված օրենքն իր ուժը կորցրեց և նույն օրն ուժի մեջ մտավ Գնումների մասին ներկա օրենքը, որն ԱԺ կողմից ընդունվեց 2016թ. դեկտեմբերի 12-ին: Այս օրենքում ևս բողոքարկման կարգավորումներին զգալի տեղ էր հատկացված (Օրենքի 6-րդ բաժինը՝ Զոդված 46-51): Զետաքրքիր է նշել, որ գնումների օրենսդրության պատմության մեջ առաջին անգամ օրենքում վերանայվեցին, ընդ որում երկու անգամ, բողոքարկման կարգավորումները: Ի սկզբանե, այդ կարգավորման հիմնական դրույթները, այն է, ովքեր կարող են բողոքարկել (յուրաքանչյուր անձ), ինչ կարող է բողոքարկվել (գործողություններ (անգործություն), որոշումներ), որ մարմինների գործողություններն (անգործությունը) և/կամ որոշումները կարող են բողոքարկվել (պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և դատական կարգով, ԳԲԽ-ի) և ում կարող են բողոքարկել (նախքան պայմանագրի կնքումը՝ միայն ԳԲԽ-ին և (քաղաքացիական) դատարանին), բառացիորեն ամբողջովին կրկնում էին նախորդ օրենքի համապատասխան դրույթները: Սակայն արդեն օրենքի գործողության մեկ տարին չլրացած՝ 2018թ. մարտի 23-ին ԱԺ-ն Գնումների մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով (ուժի մեջ մտավ նույն տարվա ապրիլի 9-ին) վերացրեց ԳԲԽ-ն՝ փոխարենը, որպես գնումների բողոքարկման արտադատական մարմին ներմուծելով բողոքներ քննող անձի ինստիտուտը: Այդպիսի անձինք երկուսն էին (չնայած որ կառավարության համապատասխան որոշումով դրանք պետք է երեքը լինեին) և նրանք, ի տարբերություն ԳԲԽ անդամների, որոնք գործում էին հասարակական հիմունքներով և վարձատրվում էին, ընդ որում սիմվոլիկ գումարով (6,000 ՀՀ դրամ), միայն տվյալ բողոքի քննության համար, բողոքներ քննող անձը մշտական հիմունքներով գործող պետական ծառայող էր, ով պաշտոնավարում է հինգ տարի ժամկետով:⁸

Վերջապես, 2022 թ. հունվարի 21-ին ԱԺ կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքում և առնչվող հարակից օրենքներում իրականացված փոփոխությունների արդյունքում գնման ընթացակարգերի բողոքարկման լիազորությունները վերապահվեցին միայն դատարաններին՝ նման դեպքերի համար սահմանելով հատուկ վարույթով որոշումների կայացման ընթացակարգ՝ դրանով իսկ վերացնելով գնումների բողոքարկման արտադատական բաղադրիչը: Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բողոք ներկայացնելու հնարավորություն ընձեռնվեց միայն շահագրգիռ անձանց, իսկ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները բողոքարկելու հնարավորությունը՝ յուրաքանչյուր ցանկացողի: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում («սև ցուցակում») ներառվելու գործընթացը վերապահվեց լիազոր մարմին՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Այսպիսով, որոշվեց, որ գնումների հետ կապված վեճերը քննվելու են Երևանի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանում և լուծվելու են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 30 օրվա ընթացքում՝ նախատեսված ժամկետը մեկ անգամ մինչև 10 օրացուցային օրով երկարաձգվելու հնարավորությամբ: Օրենսդրական փոփոխությունները ուժի մեջ մտան 2022թ. հունիսի 1-ից:

⁸ Ինչպես և ԳԲԽ անդամները, բողոքներ քննող անձն իրականում անկախ չէր, ընդ որում, դա զալիս էր նաև օրենքում եղած որոշ դրույթներից: Մասնավորապես, օրենքի Զոդված 47-ի մաս 5-ի համաձայն՝ «գնումների հետ կապված բողոքներ քննող անձին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններն ապահովում է լիազորված մարմինը»: Նաև, Զոդված 49-ի մաս 3-ի համաձայն, լիազոր մարմինը «հաստատում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը»:

2. Հիմնախնդիրը, այն ուսումնասիրելու անհրաժեշտությունը և ուսումնասիրության մեթոդաբանությունը

Հայաստանի հանրային գնումների համակարգի հիմնախնդիրներից են գնումների բողոքների քննության հետ կապված հիմնախնդիրները: Այդ հիմնախնդիրները կանոնավոր կերպով վեր են հանվում տեղական և միջազգային փորձագետների, ինչպես նաև հանրային գնումների համակարգի մոնիտորինգով զբաղվող հասարակական կազմակերպությունների⁹, կողմից: Հայաստանի հանրային գնումների առավել ընդգրկուն վերլուծությունն իրականացվել է Եվրոպական Միության ՍԻԳՄԱ ծրագրի կողմից, որի արդյունքները և դրանց հիման վրա արված եզրակացություններն ամփոփված են ՍԻԳՄԱ-ի [Հայաստանի հանրային կառավարման սկզբունքները. ելակետային իրավիճակի գեկույց. Մարտ 2019թ.](#) (տե՛ս Հանրային ֆինանսների կառավարման Սկզբունք 9-ի (Բողոքների քննության համակարգի անկախությունը, քննության արդյունավետությունը տևողության տեսանկյունից և քննությունն իրականացնող մարմինների կարողությունը) վերաբերյալ քննարկումը):¹⁰ Համաձայն այդ Սկզբունքի վերաբերյալ Չեկույցի հիմնական եզրակացության. «Բողոքարկման համակարգի անկախության ԳՀՀ-ի (Գնումների համընդհանուր համաձայնագիր) և Եվրամիություն-Հայաստան ՀՀԳՀ-ի (Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր) սահմանած չափանիշները չեն պահպանվում և (բողոքարկումների) վերաբերյալ նախկինում ընդունված որոշումները որոնելի չեն: Սակայն, բողոքների, զարմանալիորեն, փոքր քանակի պայմաններում, բողոքարկման ներկայիս մարմինների կարողությունները բավարար են այդ բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելու և դրանք հրապարակելու համար»:

2019թ. նոյեմբերի 28-ին ՀՀ կառավարության թիվ 1716-Լ որոշմամբ հաստատվեց [Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությունը և նրա իրականացման 2019-2023թթ. գործողությունների ծրագիրը](#): Ռազմավարության Բաղադրիչ 17-ը վերաբերում է գնումների բողոքարկման համակարգին և նրա թիրախը ձևակերպված է հետևյալ կերպ. «Գնումների բողոքարկման համակարգի կատարելագործում» (տե՛ս Ռազմավարության էջ 37-38): Այդ թիրախին հասնելու համար անհրաժեշտ միջոցառումը (գործողությունը) սահմանվում է «Օրենսդրական փոփոխությունների կատարում» անվանմամբ անվանմամբ, իսկ որպես այդ միջոցառման համար անհրաժեշտ քայլ սահմանվում է «Գնումների բողոքների քննությունն իրականացվում է դատարանների միջոցով»: Այլ կերպ ասած, կառավարությունը, որպես բողոքարկման որպես բողոքարկման համակարգի բարեփոխում առաջարկում էր այդ պահին գործող բողոքարկման համակարգի դատական և արտադատական բաղադրիչներից թողնել միայն դատականը՝ վերացնելով արտադատական բաղադրիչը, չնայած այն բանին, որ ՍԻԳՄԱ-ի վերը նշված Չեկույցում քննադատության էին ենթարկված երկու բաղադրիչներն էլ, ընդ որում նշելով (տե՛ս վերևում), որ երկու բաղադրիչների «կարողությունները բավարար են այդ բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելու և դրանք հրապարակելու համար»:

⁹ Սկսած 2008 թվականից (որոշ ընդմիջումներով) ԹԻՀԿ-ն իր Հայաստանի հանրային գնումների համակարգի մոնիտորինգի ծրագրերի շրջանակներում կանոնավոր կերպով իրականացնում էր գնումների բողոքարկման գործընթացի մոնիտորինգ: Տե՛ս կազմակերպության համապատասխան հրապարակումները - <https://transparency.am/en/publications/view/86>, <https://transparency.am/en/publications/view/98>, <https://transparency.am/en/publications/view/118>, <https://transparency.am/en/publications/view/140> և <https://transparency.am/en/publications/view/191>

¹⁰ Տե՛ս էջ 153-158

Գնումների մասին օրենքում համապատասխան փոփոխությունը, որը նախատեսում էր բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչի վերացում, ինչպես արդեն վերը նշվեց, ընդունվեց ԱԺ կողմից 2022 թ. հունվարի 21-ին: Մինչև ԱԺ ուղարկելը գնումների բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչի չեղարկմանն ուղղված ՀՀ Գնումների մասին օրենքում, ինչպես նաև հարակից մի շարք օրենքներում, փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը քննարկման դրվեցին [ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի նիստում](#): Որպես այդ բաղադրիչի վերացման գլխավոր հիմնավորում նշվում էր, որ գործող «արտադատական բողոքարկման համակարգն արդյունավետ չէ այն տեսակետից, որ կայացվող որոշումները գնումների մասին ՀՀ օրենսդրության տեսանկյունից խնդրահարույց են, կայացվում են միմյանց հակասող որոշումներ, որոնց հետևանքով կամ այդ որոշումները բողոքարկվում են դատարաններում կամ գնման ընթացակարգերը հայտարարվում են չկայացած, ինչը դրանք կազմակերպելու և անցկացնելու տեսակետից հանգեցնում են ծրագրերի ձախողման, դժգոհությունների և ֆինանսական կորուստների»: Նշվում էր նաև, որ համաձայն վիճակագրության, «տարեցտարի մեծանում է արտադատական կարգով քննված բողոքների վերաբերյալ կայացված որոշումները մասնակիցների կողմից դատական կարգով բողոքարկման դեպքերը»:¹¹ Ի լրումն դրա, հիմնավորման մեջ նշվում էր նաև, որ «Գործող արտադատական բողոքարկման համակարգը ինչպես ինստիտուցիոնալ (անկախության), այնպես էլ կիրառելիության տեսակետից գնահատվել է նաև ԵՄ ՍԻԳՄԱ ծրագրի փորձագետների կողմից և գնահատվել է խնդրահարույց»:¹² Հետագայում, ինչպես ցույց տվեցին այդ նախագծի քննարկումները ԱԺ և՛ գլխադասային մշտական հանձնաժողովում, և՛ լիազումար նիստում, այդ քայլը միանշանակ չընդունվեց գնումների ոլորտի փորձագետների և պրակտիկների կողմից, ընդ որում կարծիքները տրամագծորեն հակառակ էին:

Ինչպես երևում է բերված հիմնավորումից, որն, իմիջիայլոց, միակ հիմնավորումն է, գնումների լիազոր մարմինը (ՀՀ ֆինանսների նախարարությունը) որպես բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչից հրաժարվելու հիմնական փաստարկ նշում է այդ պահին գործող բողոքներ քննող անձանց ոչ արդյունավետ, շատ անգամ նույնիսկ ոչ արհեստավարժ գործունեությունը: Այստեղ հարց է առաջանում. ինչո՞ւ արտադատական բաղադրիչի հենց այդ ժամանակ գործող տարբերակի թերությունները պետք է լիազոր մարմինն հանգեցնեին այն եզրակացության, որ ընդհանրապես արտադատական բաղադրիչից պետք է հրաժարվել: Բացի այդ, լիազոր մարմնի կողմից ներկայացված հիմնավորման մեջ որևէ համեմատություն չի անցկացվում բողոքարկման համակարգի դատական և արտադատական բաղադրիչների միջև, որն էլ ավելի համոզիչ կդարձներ արտադատական բաղադրիչի՝ լիազոր մարմնի կողմից բերված քննադատությունը: Սակայն, փորձագետների կողմից բարձրաձայնվող ամենակարևոր քննադատությունն այն է, որ բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչից հրաժարվելիս չեն ուսումնասիրվել այդ քայլի այլ հնարավոր բացասական հետևանքները: Մասնավորապես,

¹¹ Սույն պնդումը ստուգելու նպատակով ծրագրի իրականացման ժամանակ Գնումների պաշտոնական տեղեկագրում այդ վիճակագրությունը ստուգվեց (տե՛ս Տեղեկագրի «Բողոքարկում» բաժնի «Բողոքարկման խորհրդի գործունեության տարեկան հաշվետվություն» ենթաբաժինը - https://procurement.minfin.am/hy/page/boghhoqarkman_khorhrdi_tarekan_hashvetvutyun/), որի արդյունքում այդ պնդման ճշմարտացիությունը հաստատվեց: Այսպես, 2018 թվականին, երբ մտցվեց բողոքներ քննող անձի ինստիտուտը, դատական կարգով բողոքարկվել էր բողոքներ քննող անձանց 42 որոշում, 2019 թվականին՝ 65 որոշում, իսկ 2020 թվականին՝ 79 որոշում:

¹² Հետաքրքիր է նշել, որ նույն հիմնավորումն էր բերվում նաև վերը նշված Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարության մեջ: Տե՛ս Ռազմավարության (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159219>) էջ 37-38

նշվում էր, որ խնդիրներ կարող են առաջանալ բողոքարկման համակարգի մատչելիության և բողոքների քննության արագության հետ: Բողոքարկման համակարգի մատչելիության աստիճանի հնարավոր նվազումը փորձագետները կապում էին արտադատական մարմինն դիմելու համեմատ դատարանին դիմելու ավելի ծախսատար լինելու, ինչպես նաև դատական համակարգի հանդեպ քաղաքացիների շրջանում դեռևս առկա զգալի աստիճանի անվստահության հետ:¹³ Մյուս խնդիրը դա դատական գործընթացների տևողությունն է՝ կապված դատարանների, մասնավորապես գնումների հետ կապված բողոքները քննող քաղաքացիական գործերով դատարանների, ծանրաբեռնվածությամբ, որը կարող է հանգեցնել բողոքների քննության զգալի ձգձգման:

Փորձագետների և պրակտիկների կարծիքների այդպիսի բևեռացվածվածությունը, թե արդյոք գնումների բողոքարկման արտադատական բաղադրիչի վերացումը կբարելավի բողոքարկման համակարգը թե ոչ, և բացի այդ, գնումներին առնչվող բողոքները *միայն* դատական կարգով քննության պրակտիկայի բացակայությունը¹⁴ ստեղծում է գնումներին առնչվող հանրության ներսում վստահության մթնոլորտի պակաս, որը կարող է բացասաբար անդրադառնալ Հայաստանում գնումների ոլորտի բարեփոխումների վրա: Հանրային գնումների բողոքարկման համակարգի անկողմնակալության և արդյունավետության վրա այդ փոփոխության ազդեցության գնահատումն էլ հանդիսանում է սույն ուսումնասիրության (որը կիրականացվի մոնիտորինգի ձևով) խնդիրը: Մոնիտորինգը կօգնի նաև հասկանալու, թե ինչը կնպաստի ստեղծելու գնումների բողոքների քննության իսկապես անկախ, արդյունավետ և մատչելի համակարգ:

Սույն մոնիտորինգային հետազոտության մեթոդաբանության հիմքում ընկած է գնումների բողոքարկման երկբաղադրիչ (արտադատական և դատական) և միաբաղադրիչ (միայն դատական) համակարգերի համեմատությունը: Այդ նպատակով վերցվել է երկու իրար հավասար ժամանակահատված, որից մեկում գործել է բողոքարկման երկբաղադրիչ, իսկ մյուսում՝ միաբաղադրիչ համակարգը և այդ ժամանակահատվածների համար հավաքագրվել է բողոքներին առնչվող որոշ տվյալների վիճակագրությունը: Երկբաղադրիչ համակարգի համար վերցվել է 2021թ. հունիս-դեկտեմբեր ժամանակահատվածը, իսկ միաբաղադրիչ համակարգի համար՝ 2022թ. հունիս-դեկտեմբեր ժամանակահատվածը: Բացի այդ, հավաքագրվել է առաջին ժամանակահատվածի (2021թ. հունիս-դեկտեմբեր) ընթացքում բողոքներ քննող անձերին (արտադատական համակարգ) հասցեագրված բողոքներին առնչվող նույն տվյալների վիճակագրությունը: Հավաքագրվել է վիճակագրություն բողոքների թվի,¹⁵ նրանց քննության փաստացի տևողության, բողոքների

¹³ Մասնավորապես, ԱՄՆ Միջազգային հանրապետական ինստիտուտի (International Republican Institute - IRI) կողմից Հայաստանում 2018թ. օգոստոսից պարբերաբար անցկացվող հանրային կարծիքի հարցման արդյունքները ցույց են տալիս. որ դատարանների աշխատանքով չբավարարված հարցվողների թիվը միշտ գերազանցել է այդ աշխատանքով բավարարվածների թվին: Օրինակ, 2023թ. մարտին անցկացված հարցումը ցույց տվեց, որ դատարանների աշխատանքից բավարարված չէր հարցվողների 56%-ը, և միայն 29%-ն էր բավարարված (տե՛ս <https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-january-march-2023/>, սլայդ 29)

¹⁴ Ինչպես երևաց նախորդ բաժնի շարադրանքից, Հայաստանում, սկսած 2000 թվականից, երբ ընդունվեց Գնումների մասին առաջին օրենքը, գնումների բողոքարկման համակարգը միշտ էլ ունեցել է արտադատական բաղադրիչ:

¹⁵ Համեմատության ճշգրտության նպատակով 2021թ. հունիս-դեկտեմբեր ամիսների դեպքում հավաքագրվել են գնումների գործընթացների մասնակիցների դատական կարգով միայն այն բողոքները, որոնք ուղղված են եղել պատվիրատուների գործողությունների դեմ: Դա պայմանավորված է նրանով, որ մոնիտորինգի 2022թ.-ի ժամանակահատվածում բողոքարկման արտադատական բաղադրիչն այլևս չկար, որի հետևանքով բողոքներ քննող անձանց որոշումների դեմ մասնակիցների բողոքների թվերն այդ ժամանակահատվածների համար համեմատելի չեն:

բաշխումն ըստ գնման գործընթացի փուլերի, բողոքների վերաբերյալ ընդունված որոշումների հետագա բողոքարկման դեպքերի թիվը, մերժված և բավարարված բողոքների թվերը և նրանց հարաբերակցությունը, և այլն: Համեմատելով նշված ժամանակահատվածների վիճակագրությունը՝ վեր են հանվել այդ ժամանակահատվածներում հավաքագրված տվյալների միջև տարբերությունները՝ պարզելու համար, թե, արդյոք, այդ տարբերությունները որակապես էական բնույթի են: Էական տարբերությունների դեպքում փորձ էր արվել հասկանալ այդ տարբերության պատճառները: Մոնիտորինգի համար որպես պաշտոնական տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական կայքի (www.gnumner.am) «Բողոքարկում» (2021թ. հունիս-դեկտեմբերին արտադատական մարմինն հասցեագրված բողոքներ) և «Դատական կարգով բողոքարկումներ» (2022թ.-ին դատարաններին հասցեագրված բողոքներ) բաժիններում, և ԴատաԼեքս դատական տեղեկատվական համակարգում (www.datalex.am) հրապարակված տեղեկատվությունը:

3. Մոնիտորինգի արդյունքները և դրանց վերլուծությունը

Համաձայն պաշտոնական տեղեկատվական աղբյուրներում հրապարակված տեղեկատվության՝ 2022թ. հունիս 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի ընթացքում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան պատվիրատուների և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ ներկայացվել է 72 բողոք/հայցադիմում, որից 40-ի մասով կայացվել է վերջնական որոշում (55%):¹⁶ Այդ բողոքների վերաբերյալ տվյալները և նրանց վերլուծությունը ներկայացված են սույն բաժնի վերջում: Արդյունքում, ներկայացված բողոքներից 11-ը բավարարվել է (այդ թվում մասնակի) (15%), 29-ը՝ մերժվել (40%), իսկ մնացածի պարագայում հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունների վերացման նպատակով կամ ուղարկվել է լրացուցիչ դատաքննության: Ներկայացված վերաքննիչ բողոքներից միայն մեկի մասով է վերջնական որոշում (բողոքը մերժվել է) ընդունվել (տե՛ս Աղյուսակ 1): Հավելված 1-ում ներկայացված է մանրամասն տեղեկատվություն յուրաքանչյուր բողոքի վերաբերյալ (հայցադիմումի ստացման ամսաթիվ, հայցվոր, պատասխանող, պահանջ, միջանկյալ որոշումներ, որոշում): Վերոնշյալ բողոքների մասով 4 դատական գործ ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան, սակայն ուսումնասիրությունից հետո դրանք վերադարձվել են առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան:

2021թ. հունիսից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի ընթացքում պատվիրատուների որոշումների դեմ դատական կարգով ներկայացվել է 34 բողոք, որից 8-ը բավարարվել է, այդ թվում մասնակի (24%), 2-ը՝ մերժվել (6%), իսկ մնացածի պարագայում հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունների վերացման նպատակով կամ ուղարկվել է լրացուցիչ դատաքննության: Այս բողոքների մասով ներկայացված վերաքննիչ բողոքներից երկուսը մերժվել է, մեկը՝ բավարարվել: Մնացած բողոքների պարագայում հայցի ընդունումը մերժվել է, գործի վարույթը կարճվել է կամ հայցը թողնվել է առանց քննության (տե՛ս Աղյուսակ

¹⁶ Սրանց մեջ չեն մտնում մասնակիցների կողմից պատվիրատուների դեմ դատական կարգով բերված այն բողոքները, որոնք բերված են վերջիններիս կողմից նրանց՝ Գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու դեմ, ինչպես նաև մասնակիցների կողմից բողոքներ քննող անձանց դեմ դատական կարգով ներկայացված բողոքները (մինչև օրենքի փոփոխության ուժի մեջ մտնելը ժամանակահատվածում ընդունված որոշումների դեմ, որոնց քննությունը ընթացել է դիտարկվող ժամանակաշրջանում):

1): **Հավելված 2**-ում ներկայացված է մանրամասն տեղեկատվություն յուրաքանչյուր բողոքի վերաբերյալ (հայցադիմումի ստացման ամսաթիվ, հայցվոր, պատասխանող, պահանջ, միջանկյալ որոշումներ, որոշում):

Ինչպես երևում է **Աղյուսակ 1**-ից, նույնիսկ առանց դատական կարգով բողոքները հաշվի առնելու, 2021թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին արտադատական կարգով քննվել են մոտ երկու անգամ ավելի մեծ թվով բողոքներ, քան այն վերացնելուց հետո՝ դատական կարգով 2022թ հունիս-դեկտեմբեր ամիսներին:

Ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2021թ. դիտարկվող ժամանակահատվածում արտադատական կարգով ընդունված որոշումների շուրջ 6%-ը այնուհետև բողոքարկվել է դատարանում (դիտարկվող ժամանակաշրջանում արտադատական 138 բողոքների պարագայում բողոքը քննող անձանց որոշումների դեմ դատարան է ներկայացվել է 8 բողոք):

Աղյուսակ 1 . Պատվիրատուների գործողությունների և որոշումների դեմ ներկայացված բողոքներ. 2021-2022թթ. հունիս-դեկտեմբերի 31

	Դատական կարգով քննված				Արտադատական կարգով քննված	
	01.06.2022-31.12.2022		01.06.2021-31.12.2021		01.06.2021-31.12.2021	
	Բողոքների քանակը, հատ	Մասնաբաժինը ընդհանուրում, %	Բողոքների քանակը, հատ	Մասնաբաժինը ընդհանուրում, %	Բողոքների քանակը, հատ	Մասնաբաժինը ընդհանուրում, %
Բավարարվել է (նաև մասնակի)	11	15	8	24	72	52
Մերժվել է	29	40	2	6	65	47
Բողոքը վերադարձվել է	12	17	5	15	-	-
Դատաքննությունը ընթացքի մեջ է	14	19	15	44	-	-
Թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է	6	8	4	12	1	1
Ընդամենը	72	100	34	100	138	100

Աղյուսակ 1-ը վեր է հանում ևս մեկ ուշագրավ պատկեր: Այսպես, 2021թ հունիս-դեկտեմբեր ամիսներին արտադատական կարգով քննված և կամ բավարարված կամ մերժված 137 բողոքներից լրիվ կամ մասնակի բավարարվել է 72-ը կամ բոլոր այդպիսի բողոքների մոտ

52.5%-ը: Միևնույն ժամանակ, 2022թ հունիս-դեկտեմբեր ամիսներին դատական կարգով քննված և կամ բավարարված կամ մերժված 40 բողոքներից լրիվ կամ մասնակի բավարարվել է 15-ը կամ բոլոր այդպիսի բողոքների 37.5%-ը:

2021թ. և 2022թ. յոթ ամիսների կտրվածքով պատվիրատուների գործողությունների դեմ քննված բողոքների հիմնական պատճառների վերլուծության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների հիմնական պատճառները (ընդունված որոշումների մեջ). 2021-2022թթ. հունիս-դեկտեմբերի 31

	Դատական կարգով քննված բողոքների քանակը		Արտադատական կարգով քննված բողոքների քանակը
Բողոքի հիմքը	01.06.2022-31.12.2022	01.06.2021-31.12.2021	01.06.2021-31.12.2021
Հրավերի պայմանների դեմ ներկայացված բողոքներ	5	-	31
Հայտերի գնահատման փուլում կայացրած որոշումների դեմ ներկայացված բողոքներ	22	1	106
Պատվիրատուների կողմից կայացրած պայմանագրերը միակողմանի լուծելու դեմ ներկայացված բողոքներ	12	1	-
Այլ (պայմանագրի արդյունքների ընդունում, գումարի բռնագանձում և այլն)	1	8	-
Ընդամենը	40	10	137

Ինչպես երևում է աղյուսակում բերված տվյալներից, 2022թ.-ին դատական բողոքների մեծ մասը (55%) եղել են հայտերի գնահատման փուլում ընդունված որոշումների դեմ: Էլ ավելի մեծ է հայտերի գնահատման փուլում ընդունված որոշումների դեմ բողոքների տեսակարար կշիռը (77.4%), որոնք 2021թ.-ին քննվել են արտադատական կարգով: Սա կարող է ցույց տալ, որ առավել հաճախ խնդիրներ են առաջանում հայտերի գնահատման փուլում ընդունված որոշումների որակի կամ անաչառության հետ:

Ուշագրավ է այն, որ չնայած 2022թ. դիտարկվող ժամանակահատվածում պատվիրատուների որոշումների դեմ դատական կարգով ներկայացված և քննված բողոքների թիվը ավելի քան երկու անգամ գերազանցում է նախորդ տարվա նմանատիպ ցուցանիշը, սակայն վերաքննիչ բողոքների քանակը Էական փոփոխությունների չի ենթարկվել (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Վերաքննիչ բողոքներ վերջնական որոշման դեմ. 2021-2022թթ. հունիս-դեկտեմբերի 31

	01.06.2022-31.12.2022	01.06.2021-31.12.2021
	Բողոքների քանակը, հատ	Բողոքների քանակը, հատ
Բավարարվել է	-	1
Մերժվել է	1	2
Ընթացքի մեջ է	5	2
Ընդամենը	6	5

Աղյուսակներ 4-ում և 5-ում ներկայացված է այն պատվիրատուների ցանկը, ում գործողությունների դեմ առավել հաճախակի են բողոք ներկայացրել մատակարարները, համապատասխանաբար 2022 և 2021 թվականներին:

Աղյուսակ 4. Պատվիրատուներ, ում գործողությունները առավել հաճախակի են բողոքարկվել, 2022թ. հունիս-դեկտեմբերի 31

	Պատվիրատուներ	Ընդամենը	Բավ.	Մերժ.	Ընթացքի մեջ
1	Ոստիկանություն	10	-	7	3
2	ՏԿԵՆ	6	1	2	3
3	Երևանի քաղաքապետարան	5	-	2	3
4	ՀԱԷԿ ՓԲԸ	5	-	3	2
5	ՊԵԿ	4	1	1	2
6	Երևանի կենդանաբանական այգի ՀՈԱԿ	2	2	-	-
7	Քաղաքաշինության կոմիտե	2	-	1	1
8	Արթիկի համայնքապետարան	2	-	1	1
9	Նորք-Մարաշ ԲԿ ՓԲԸ	2	-	2	-

Այստեղ ևս, ինչպես և **Աղյուսակ 1**-ում, երևում է, թե որքան շատ են գերիշխում մերժված բողոքները՝ 23 բողոքից մերժվել է 19-ը, կամ, բոլոր մերժված և բավարարված բողոքների 82.6%-ը:

Աղյուսակ 5. Պատվիրատուներ, ում գործողությունները առավել հաճախակի են բողոքարկվել (դատական կարգով), 2021թ. հունիս-դեկտեմբերի 31

	Պատվիրատուներ	Բավ.	Մերժ.	Ընդամենը	Ընթացքի մեջ
1	ՊՆ	2	-	5	3
2	Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն	-	-	4	4
3	Երևանի քաղաքապետարան	2	-	3	1
4	ՏԿԵՆ	-	-	3	3
5	Քաղաքաշինության Կոմիտե	-	-	3	3
6	ՀԱԷԿ ՓԲԸ	-	-	2	2
7	ՊԵԿ	1	-	2	1
8	Դատական դեպարտամենտ	-	1	2	1
9	Էկոնոմիկայի նախարարություն	-	-	2	2

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով այն փաստը, որ 2022թ. դիտարկվող ժամանակահատվածում պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների մասով դատական կարգով ընդունված վերջնական որոշումների մասնաբաժինը ավելացել է նախորդ տարվա համեմատ (30%-ից դառնալով 55%), կարելի է ենթադրել, որ այս առումով նկատվել է որոշակի արդյունավետության բարելավում: Վերջինս պայմանավորված է նաև օրենսդրական փոփոխությամբ, որով սահմանվեց գնումների բողոքների մասով հատուկ վարույթով որոշումների կայացման ընթացակարգ:

Նախքան բողոքարկման արտադատական բաղադրիչի վերացումը պատվիրատուն իրավունք չուներ մասնակցին միանգամից Գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ (հետայսու - Սև ցուցակ) ներառել: Ելնելով այն ժամանակ գործող օրենսդրական կարգավորումներից՝ պատվիրատուն այդ նպատակով դիմում էր բողոքներ քննող անձին, որը որոշում էր կայացնում պատվիրատուի դիմումի կապակցությամբ: Եթե բողոքներ քննող անձը բավարարում էր պատվիրատուի դիմումը, ապա մասնակիցը, որին այդ ցուցակում պատվիրատուն առաջարկում էր ներառել, կարող էր դատական կարգով բողոքարկել բողոքներ քննող անձի որոշումը: Բողոքարկման արտադատական բաղադրիչի վերացումից հետո, այժմ պատվիրատուն մասնակցին ինքն է ներառում Սև ցուցակում, և մասնակիցը կարող է պատվիրատուի այդ որոշումը բողոքարկել:

դատական կարգով: Քանի որ սույն ծրագրի շրջանակներում մասնակիցների կողմից բողոքներ քննող անձանց դեմ դատական կարգով ներկայացված բողոքների վերաբերյալ տվյալները չեն հավաքագրվում (տե՛ս նախորդ բաժինը), բաժնի սկզբում նշված 72 բողոք/հայցադիմումներն իրենց մեջ չեն ներառում այն բողոք/հայցադիմումները, որոնք մասնակիցները ներկայացրել են պատվիրատուների կողմից իրենց գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու դեմ:

2022թ. դիտարկվող ժամանակահատվածում ՍԱ ցուցակում ներառելու որոշման դեմ ներկայացվել է 53 բողոք: Այս բողոքներից 22-ը եղել են գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց՝ մինչև 2022թ. հունիսի 1-ը (այսինքն, բողոքարկման արտադատական բաղադրիչի վերացումը) կայացրած որոշումների առումով, իսկ մնացածը ներկայացվել են անմիջականորեն պատվիրատուների ընդունած որոշումների դեմ (արտադատական բողոքարկման մարմնի լուծարման գործընթացի հետևանքով), որից 7-ը բավարարվել է (ՍԱ ցուցակում ներառումը մերժվել է), 9-ը՝ մերժվել (ՍԱ ցուցակում ներառումը բավարարվել է), իսկ մնացածի մասով դատաքննությունը դեռ ընթացքի մեջ է (տե՛ս **Աղյուսակ 6): Հավելված 3**-ում ներկայացված է մանրամասն տեղեկատվություն յուրաքանչյուր բողոքի վերաբերյալ (հայցադիմումի ստացման ամսաթիվ, հայցվոր, պատասխանող (բողոքներ քննող անձ), պահանջ (բողոքներ քննող անձի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ), միջանկյալ որոշումներ, որոշում):

2021թ. դիտարկվող ժամանակահատվածի համար գնումների ՍԱ ցուցակում ներառման վերաբերյալ պատվիրատուների կողմից բողոքներ քննող անձանց ներկայացված դիմումների թիվը կազմել է 388, որոնցից 226-ը բավարարվել է բողոքներ քննող անձանց կողմից: Այդ 226 որոշումներից 38-ը դատական կարգով բողոքարկվել են մասնակիցների կողմից: Դրանցից երկուսը մերժվել են (ՍԱ ցուցակում ներառումը բավարարվել է), իսկ մնացած բողոքներից 12-ի դեպքում հայցը թողնվել է առանց քննության: Երեքի դեպքում գործը հանձնվել է արխիվ, մեկ գործի վարույթը կարճվել է, իսկ մնացածի պարագայում հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունների վերացման նպատակով կամ ուղարկվել է լրացուցիչ դատաքննության (տե՛ս **Աղյուսակ 6): Հավելված 4**-ում ներկայացված է մանրամասն տեղեկատվություն յուրաքանչյուր բողոքի վերաբերյալ (հայցադիմումի ստացման ամսաթիվ, հայցվոր, պատասխանող, պահանջ, միջանկյալ որոշումներ, որոշում):

Աղյուսակ 6. Մասնակիցներին գնումների Սև ցուցակում ներառելու որոշման վերաբերյալ ներկայացված բողոքներ, 2021 և 2022թթ. հունիս-դեկտեմբերի 31

	Դատական կարգով քննված				Արտադատական կարգով քննված	
	01.06.2022-31.12.2022		01.06.2021-31.12.2021		01.06.2021-31.12.2021	
	Բողոքների քանակը, հատ	Մասնաբաժինը ընդհանուրում, %	Բողոքների քանակը, հատ	Մասնաբաժինը ընդհանուրում, %	Բողոքների քանակը, հատ	Մասնաբաժինը ընդհանուրում, %
Սև ցուցակում ներառումը բավարարվել է	9	17	2	5	226	58
Սև ցուցակում ներառումը մերժվել է	7	13	-	-	161	41
Բողոքը վերադարձվել է	5	9	1	3	-	-
Դատաքննությունը ընթացքի մեջ է	32	60	23	61	-	-
Թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է	-	-	12	32	1	
Ընդամենը	53	100	38	100	388	100

Ներկայացված տվյալներից երևում է, որ 2021թ. դիտարկվող ժամանակահատվածում Սև ցուցակում ներառելու վերաբերյալ արտադատական կարգով պատվիրատուների օգտին կայացված որոշումների շուրջ 17%-ը (226 բողոքներից 38-ը) բողոքարկվել է դատարանում:

Ինչպես արդեն նշվել էր, օրենսդրական փոփոխության համաձայն պետությունների հետ կապված վեճերի համար սահմանվել էր հատուկ վարույթով որոշումների կայացման ընթացակարգ, այն է՝ բողոքները պետք է լուծվեին հայցադիմումը դատարանում վարույթ ընդունելուց հետո 30 օրվա ընթացքում՝ նախատեսված ժամկետը մեկ անգամ մինչև 10 օրացուցային օրով երկարաձգվելու հնարավորությամբ:

Դիտարկվող երկու ժամանակահատվածներում դատական կարգով ներկայացված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ չնայած նոր փոփոխությունը զգալիորեն կրճատել է դրանց քննության և որոշումների ընդունման ժամանակահատվածը, այնուամենայնիվ կան մի շարք դեպքեր, երբ բողոքի վարույթ ընդունելու կամ քննության ժամանակահատվածը բավական երկարաձգվել է, ինչը հանգեցրել է օրենքով սահմանված ժամկետների խախտմանը (տե՛ս **Հավելվածներ 5-ից 8**): Առավել անհանգստացնող է այն

հանգամանքը, որ ընդհանուր ներկայացված բողոքների մեջ հաճախ են այն դեպքերը, երբ հայցադիմումը մի քանի անգամ վերադարձվել է, ինչը հանգեցրել է ոչ միայն քննության ժամկետների հետաձգմանը, այլև նաև նոր դիմումի չներկայացմանը, ինչն էլ հետագայում հանգեցրել է տվյալ գործերի փակմանը: Այս հանգամանքով էլ հիմնականում պայմանավորված է այն փաստը, որ 2022թ. դիտարկվող ժամանակաշրջանում պատվիրատուների գործողությունների և Սև ցուցակում ներառելու որոշումների դեմ ներկայացված բողոքների միայն 55 և 30 տոկոսի մասով է համապատասխանաբար վերջնական որոշում ընդունվել:

Հավելվածներ 5-ից 8-ում ներկայացված են պատվիրատուների գործողությունների և որոշումների դեմ ներկայացված բողոքների քննության տարբեր փուլերում ընթացակարգերի տևողության մանրամասները (դիմումի տալուց մինչև վարույթ ընդունելը, վարույթ ընդունելուց մինչև վերջնական որոշում ընդունելը և դիմումի տալուց մինչև վերջնական որոշում ընդունելը ընկած ժամանակահատվածը օրերով):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մոնիտորինգի արդյունքները և նրանց վերլուծությունը հնարավորություն է տալիս գալ որոշ եզրահանգումների: Սակայն այստեղ կարևոր է հաշվի առնել մի շարք գործոններ, որոնք բխում էին ինչպես իրականացված ծրագրի սահմանափակումներից, այնպես էլ մոնիտորինգի համար ընտրված ժամանակահատվածներից, այնպես էլ տվյալների հավաքագրման հետ կապված տեխնիկական խնդիրներից:

Նախ, մոնիտորինգային ծրագրի ֆինանսական և ժամանակային սահմանափակումները հնարավորություն չտվեցին իրականացնելու, թեկուզ և սահմանափակ մասշտաբի, որակական համեմատություններ, այն է, համեմատել բողոքներ քննող անձանց և բողոքներ քննող դատավորների՝ բողոքների վերաբերյալ ընդունած որոշումների որակի, հիմնավորվածության և կողմնակալության առումով: Բացի այդ, ծրագրի ոչ մեծ տևողությունը (սկզբնական պլանավորված էր այն իրականացնել 12 ամսում, հետագայում այն երկարացվեց ևս 4 ամսով) հնարավորություն չտվեց հավաքագրել ավելի մեծ ծավալի տվյալներ, որը պարզվեց, որ կարևոր էր, քանի որ զգալի թվով գործերի դատաքննությունը ծրագրի ավարտին դեռևս ավարտված չէր: Արդյունքում, ավարտված դատական գործերի սակավաթիվ լինելը նվազեցնում էր որոշ համեմատությունների ճշգրտության աստիճանը:

Մոնիտորինգի համար ընտրված ժամանակահատվածները (2021 և 2022 թվականների հունիսի 1-ից մինչև դեկտեմբեր 31) որոշ իմաստով այնքան էլ “չեզոք” չէին այն իմաստով, որ սովորական ժամանակահատվածներ չէին: Նախ, այն փաստը, որ արդեն 2021թ. օգոստոսին հայտնի դարձավ, որ կառավարությունը մտադիր է վերացնել գնումներ բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչը,¹⁷ կարող էր որոշակի հոգեբանական ազդեցություն գործել բողոքներ քննող անձանց վրա, որն էլ, իր հերթին, կարող էր ազդել նրանց կողմից ընդունված որոշումների վրա: Երկրորդ, մոնիտորինգի երկրորդ ժամանակահատվածը (2022թ. հունիսի 1 - դեկտեմբերի 31) հանդիսանում էր բողոքարկման նոր, միաբաղադրիչ (միայն դատական) համակարգի գործողության սկիզբը, որն իր հետ

¹⁷ ՀՀ կառավարության օգոստոսի 18-ի նիստում հավանություն տրվեց ԱԺ ուղարկվելիք օրենքների նախագծերի այն փաթեթին, որը պետք է ապահովեր այդ բաղադրիչի վերացումը

բերում էր այն բոլոր խնդիրները, որոնք առաջանում են նոր համակարգի գործողության սկզբի հետ, չնայած, դատական բաղադրիչը միշտ, սկսած 2000 թվականից, երբ Հայաստանում ընդունվեց Գնումների մասին առաջին օրենքը, առկա է եղել որպես գնումների բողոքարկման համակարգի բաղադրիչ:

Վերջապես, իրենց ազդեցությունն ունեցան նաև տեխնիկական խնդիրները, նախ և առաջ, կապված Դատալեքս համակարգի հետ: Այն հիմնականում կապված էր համակարգի որոնողական հնարավորությունների հետ, որը դժվարացնում էր գնումների հետ կապված դատաքննությունների դեպքերը վեր հանելու հետ: Բացի այդ, Գնումների պաշտոնական էլեկտրոնային <https://gnumner.minfin.am/> տեղեկագրում բավարար մանրամասն չի ներկայացված 2022թ. դատական կարգով բողոքարկման վիճակագրությունը:¹⁸

Ելնելով այս ամենից՝ մոնիտորինգային սույն հետազոտությունը կարելի է որակել որպես պիլոտային հետազոտական ավելի մանրակրկիտ և խորը հետազոտությունների ակնկալիքով: Մոնիտորինգի հիմնական **եզրակացություններն** են.

- Ինչպես երևում է մոնիտորինգի արդյունքներից, 2021թ. հունիսի 1-ից դեկտեմբերի 31 ընկած ժամանակահատվածում արտադատական կարգով քննվել է 138 բողոք, իսկ 2022 հունիսի 1-ից դեկտեմբերի 31 ժամանակահատվածում, երբ գնումների բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչն այլևս չկար, դատական կարգով քննվել էր 72 բողոք, այսինքն, մոտ երկու անգամ ավելի քիչ:¹⁹ Այս տարբերությունը բավականին զգալի է և պետք է հասկանալ, թե արդյոք մասնակիցները չեն վստահում թե, ելնելով տարբեր պատճառներից, խուսափում են դատարան դիմելուց: Այլ խոսքով, խնդիր է առաջանում, արդյոք ավելի քիչ մատչելի է դարձել բողոքարկման համակարգը:
- 2021թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին արտադատական կարգով քննված և կամ բավարարված կամ մերժված բողոքներից լրիվ կամ մասնակի բավարարվել է դրանց 52.5%-ը: Միևնույն ժամանակ, 2022թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին դատական կարգով քննված և կամ բավարարված կամ մերժված բողոքներից լրիվ կամ մասնակի բավարարվել է դրանց 37.5%-ը: Լրիվ կամ մասնակի բավարարված բողոքների տեսակարար կշիռների այսպիսի տարբերությունը ստիպում է լրացուցիչ ուսումնասիրել բողոքների քննության գործընթացները՝ հասկանալու համար, թե, արդյոք, ավելի կողմնակալ է դարձել (ի վնաս մասնակիցների) գնումների բողոքարկման ներկա համակարգը:
- Ե՛վ 2021, և՛ 2022 թվականներին մասնակիցների կողմից ներկայացված բողոքների (Սև ցուցակում ներառելու հետ կապված բողոքները չհաշված) մեծ մասը (2021թ.-ին 77.4%-ը, իսկ 2022թ.-ին 55%-ը) վերաբերել են հայտերի գնահատման փուլում ընդունված որոշումների որակի կամ անաչառության հետ կապված խնդիրների հետ: Սա կարող է մատնանշել այն փաստի վրա, որ գնումների այդ փուլն առավել խնդրահարույց փուլն է: Իհարկե, չի բացառվում, որ մասնակիցներն ուղղակի ավելի քիչ ուշադրություն են դարձնում գնումների գործընթացների այլ փուլերի վրա:
- Չնայած 2021թ.-ին դատական կարգով ավելի քան երկու անգամ քիչ բողոք է քննվել, քան 2022թ.-ին (համապատասխանաբար, 34 և 72), միևնույն ժամանակ, վերաքննիչ բողոքների թիվը համարյա անփոփոխ է մնացել (5 բողոք 2021թ.-ին և 6՝ 2022թ.-ին): Սա խոսում է կամ նախկինի համեմատ այժմ (2022թ. հունիսի 1-ից սկսած) գնումների հետ կապված վեճերի վերաբերյալ ավելի որակյալ և պատճառաբանված որոշումներ կայացնելու հետ, կամ ինչպես

¹⁸ Արդեն 2023 թվականի վիճակագրությունը Տեղեկագրում շատ ավելի մանրամասն և հանգամանալից է:

¹⁹ Այս թվերի մեջ չեն մտնում Սև ցուցակի մեջ ներառման հետ կապված բողոքները:

և արտադատականի համեմատ դատականի դեպքում, մասնակիցների՝ դատարաններին չվստահելու կամ ելնելով տարբեր պատճառներից, դատարան դիմելուց խուսափելու հետ:²⁰

- Մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ 2021 թվականի համեմատ 2022 թվականին կրճատվել է մոնիտորինգի ժամանակահատվածում դեռևս ընթացքի մեջ գտնվող դատական գործերի տեսակարար կշիռը (2021թ.-ի 44.1%-ից մինչև 20.5% 2022թ.-ին): Դրա հետ միասին ավելացել է նաև վերջնական որոշումով (մերժում կամ բավարարում) գործերի տեսակարար կշիռը (30%-ից մինչև 55%): Սա նույնպես հաստատում է վերը նշված՝ Զաղաքացիական դատավարության օրենսգրքում գնումների հետ կապված վեճերի համար հատուկ վարույթի ներմուծման արդյունավետ լինելը:
- Միևնույն ժամանակ մոնիտորինգը բացահայտել է, որ զգալի թիվ են կազմում դեպքերը, երբ բողոքի վարույթ ընդունելու կամ քննության ժամանակահատվածը բավական երկարաձգվել է, ինչը հանգեցրել է օրենքով սահմանված ժամկետների խախտմանը: Մեծ թիվ են նաև կազմում դեպքերը, երբ հայցադիմումը մի քանի անգամ վերադարձվել է, ինչը հանգեցրել է քննության ժամկետների հետաձգմանը: Դա առավել ակնհայտ երևում էր 2022 թվականին պատվիրատուի կողմից Սև ցուցակում ներառելու դեմ ներկայացված բողոքների քննության դեպքում, երբ այդ բողոքների միայն 30%-ի դեպքում էր մոնիտորինգի ժամանակահատվածում վերջնական որոշում ընդունվել: Սա կարող է վկայել այն մասին, որ նույնիսկ բողոքարկման արտադատական բաղադրիչի վերացումից հետո բողոքների քննության ձգձգման պրակտիկան (հաճախ որոշ մասնակիցների կողմից՝ միտումնավոր), որը նշվում էր որպես արտադատական բաղադրիչի թերություններից մեկը, պահպանվում է՝ հարմարվելով խաղի նոր կանոններին:
- 2022թ. դիտարկվող ժամանակահատվածում վերոնշյալ բողոքների մասով դատական կարգով ընդունված վերջնական (բավարարված, մերժված,) որոշումների մասնաբաժինը ավելացել է նախորդ տարվա համեմատ (5%-ից դառնալով 30%), սակայն արդյունավետության տեսանկյունից այս ցուցանիշը դեռ բարելավման կարիք ունի: Ուշագրավ է նաև, որ 2021թ. դատական բողոքների շուրջ 32%-ը թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է:

Վերը բերված եզրակացությունների հիման վրա կարելի է անել որոշ **առաջարկություններ**.

1. Առավել համարձակ առաջարկը, թերևս, այն է, որ, քանի որ միանշանակ չէ, որ գնումների բողոքարկման ներկայումս գործող միաբաղադրիչ (միայն դատական կարգով բողոքարկում) համակարգը ապահովում է այդ համակարգի ավելի բարձր մատչելիություն, ձգձգումներից զերծ բողոքների քննություն և ընդունված որոշումների ավելի բարձր որակ և անկողմնակալություն, կարելի է դիտարկել վերադարձ դեպի բողոքարկման երկբաղադրիչ համակարգ (դատական և արտադատական): Իհարկե, դա չի նշանակում, որ դա լինելու է վերադարձ դեպի Հայաստանում նախկինում գործող արտադատական համակարգի որևէ մոդելներից մեկին: Կարելի է ուսումնասիրել միջազգային փորձը և այնտեղից ընտրել

²⁰ Աժ կողմից 2022թ. հունվարի 21-ին ընդունած Գնումների մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքն (որով նույն թվականի հունիսի 1-ից վերացվեց գնումների բողոքարկման համակարգի արտադատական բաղադրիչը) ընդունելու հետ միաժամանակ, ընդունվեցին նաև մի շարք այլ, հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքներ: Դրանցից մեկով լրացումներ և փոփոխություն կատարվեցին Զաղաքացիական դատավարության օրենսգրքում, որով գնումների հետ կապված վեճերը պետք է քննվեն հատուկ վարույթով, որն ավելի արդյունավետ էր դարձնելու այդ վարույթները: Բացի այդ, օրենսգրքում կատարված մեկ այլ լրացումով գնումների հետ կապված վեճերով գործերը պետք է քննվեն են երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: Մինչ այդ այդ վեճերի քննության դեպքում գործում էր տարածքային ընդդատության սկզբունքը, որի հետևանքով այդ վեճերը քննվում էին ընդհանուր իրավասության տարբեր դատարաններում:

Հայաստանի համար հարմար որևէ համակարգ կամ դրանցից որևէ մեկը մոդիֆիկացնել՝ հարմարեցնելով Հայաստանի պայմաններին:

Եթե, այնուամենայնիվ, որոշում կայացնողները շարունակում են նպատակահարմար գտնել բողոքարկման ներկա միաբաղադրիչ համակարգի պահպանումը, ապա

2. Պետք է գտնել լուծումներ, որոնք արդյունավետ կերպով կչեզոքացնեն բողոքների քննության տարբեր, այդ թվում՝ նաև միտումնավոր, պատճառներով ձգձգումները:
3. Դատական կարգով բողոքարկումը պետք է դառնա ավելի մատչելի: Դրան կարելի է հասնել օրինակ, բողոքների ներկայացման հետ կապված տուրքերի չափերը վերանայելու միջոցով: Իհարկե, կարող է լինել մտավախություն, որ համակարգի ավելի մատչելի լինելը կարող է չարաշահվել գնումների գործընթացների ոչ բարեխիղճ մասնակիցների կողմից: Սակայն այստեղ էլ կարելի է գտնել լուծումներ, վերլուծելով բողոքներ ներկայացնողների բնութագրերը և նրանց կողմից ներկայացված բողոքների բովանդակությունը:
4. Հրատապ է դառնում դատարանների կողմից կայացած որոշումների վերլուծությունը՝ պարզելու համար նրանց որակը և անկողմնակալության աստիճանը:
5. Վերջապես, կարելի է դիտարկել մինչև պայմանագրի կնքումը բերված բողոքները ոչ թե քաղաքացիական, այլ վարչական օրենսդրության հիման վրա քննելը՝ թողնելով քաղաքացիական օրենսդրությունը պատվիրատու-մասնակից հարաբերություններում հետպայմանագրային փուլերում ծագած խնդիրները լուծելու համար:

**Հավելված 1. Պատվիրատուների գործողությունների և որոշումների դեմ
ներկայացված բողոքներ, 2022թ. հունիս-դեկտեմբերի 31**

	Հայցադիմումի ստացման ամսաթիվը	Հայցվոր	Պատասխանող	Պահանջը	Միջանկյալ որոշումներ	Որոշում
